

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԷՆԵՐՋԻ ԷՍ ՋԻ ԷՅ» ՍՊԸ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ
«ԷՆԵՐՋԻ ԷՍ ՋԻ ԷՅ» 4.81 ՄՎտ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ՆԱԽԱԳԾԻ ՇՐՋԱԿԱ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձեռնարկող

<<Էներջի ԷՍ ՋԻ ԷՅ>> ՍՊԸ

ԵՐԵՎԱՆ – 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ.....	9
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	12
Տեղամասի երկրաբանական կառուցվածքը.....	13
Ընդհանուր երկրաբանություն	15
Կլիմա.....	18
Մթնոլորտային օդ	21
Ջրային ռեսուրսներ	22
Հողային ռեսուրսներ.....	23
Բուսական և կենդանական աշխարհ.....	23
Բնության հատուկ պահպանվող տարածքներ.....	31
Սոցիալ տնտեսական պայմանները.....	33
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....	35
Տեխնոլոգիազական և տեխնիկական լուծումները.....	35
Շինարարական աշխատանքներ	45
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	48
Շինարարական աշխատանքներ	48
Օդի աղտոտում	49
Աղմուկի և թրթռումների ազդեցություն.....	50
Ջրօգտագործում	50
Ջրահեռացում	52
Լանդշաֆտ.....	52
Ազդեցությունը կենսաբազմազանության և էկոհամակարգերի վրա.....	53
Ազդեցությունը հողածածկի վրա.....	54
Թափոններ.....	54
Մշակութային հուշարձաններ.....	56
Սոցիալական ազդեցությունը	61

Շահագործման փուլ	62
Էլեկտրական և մագնիսական դաշտ	62
Կումուլյատիվ /հավաքական/ ազդեցություն	62
Էլեկտրակայանքների անվտանգ շահագործման կանոնները	63
Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոնները սահմանվել են համաձայն 2006 թվականի նոյեմբերի 23-ի, N 1933-Ն տեխնիկական կանոնակարգի....	63
ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	66
Ոչ մի գործողությունն այլընտրանքային տարբերակ	66
Քննարկվող տարբերակները	67
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՇՎԱՐԿ	68
ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՕԴԵՐՆՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻ ԵՎ ՎԹԱՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ	70
Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը	72
Շինարարության փուլ	72
Օդային ավազան.	72
Հողային ռեսուրսներ.	72
Ջրային ռեսուրսներ.	74
Կենսաբազմազանություն	74
Թափոններ.....	75
Աղմուկ և թրթռում.....	75
Արտակարգ իրավիճակներ.	76
Աշխատանքի կազմակերպում և աշխատանքի անվտանգություն.	76
Բարեկարգում	77
Շահագործման փուլ	77
Ջրային ռեսուրսներ.	77
Հողային ռեսուրսներ.	77
Թափոններ.....	78
Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն	78
Կայանն ապահովված է լինելու հրդեհաշիջման միջոցներով.	78
Կարողությունների զարգացում	78

Փակման փուլ.....	79
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ /ԲԿՊ/	81
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ	88
Արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը շինարարական աշխատանքների ընթացքում:.....	90
Էլեկտրակայանքների անվտանգ շահագործման կանոնները համաձայն 2006 թվականի նոյեմբերի 23-ի, N 1933-Ն ,Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններե տեխնիկական կանոնակարգ.....	99
Օգտագործված գրականության ցանկ.....	102

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանն ունի արևային էներգիայի մեծ ներուժ: Հայաստանում արագորեն զարգանում է արևային ջերմային էներգետիկան:

Ներկայումս ՀՀ-ում արևային ջրատաքացուցիչների և ֆոտովոլտաիկ տեղակայանքների կիրառումը բերում է ոչ միայն էներգախնայողության, այլ նաև դառել է տնտեսապես շահավետ:

Հայաստանի չգազաֆիկացված համայնքներում 2017թ. օգոստոսին մեկնարկել է ,Էներգաարդյունավետե վարկային ծրագիրը, որի շրջանակներում լայնորեն տեղադրվում են արևային ջրատաքացուցիչներ և ֆոտովոլտային համակարգեր:

Վերականգնվող էներգետիկայի ոլորտում ինքնավար էներգաարտադրողների մասայականացմանն ուղղված խթանիչ միջոցառումների իրականացման շրջանակներում ՀՀ Ազգային ժողովի կողմից 2017թ. դեկտեմբերի 21-ին ընդունվել են ՀՕ-262-Ն և ՀՕ-261-Ն օրենքները: ,Էներգետիկայի մասին ՀՀ օրենքում վերանայվել է 150 կՎտ սահմանաչափը՝ արդյունքում սահմանվելով 500 կՎտ իրավաբանական անձանց համար: Էլեկտրական էներգիայի խոշոր սպառողների համար ստեղծվել են օրենսդրական հիմքեր՝ բացառապես սեփական կարիքների բավարարման նպատակով ինքնավար էներգաարտադրողների գործառույթներն իրականացնելու համար: ,Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին ՀՀ օրենքում սահմանվել է վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի և էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի՝ էլեկտրական էներգիայի փոխհոսքերի շրջանակներում

մատակարարած (հանձնած) էլեկտրական էներգիայի դիմաց հատուցում չտրամադրելու ծավալի վերաբերյալ դրույթ և բարելավվել է փոխհոսքեր իրականացնելու ռեժիմային ժամանակագրությունը:

2001 թվականի մարտի 7-ին ընդունված էներգետիկայի մասին ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի համաձայն՝ տասնհինգ տարվա ընթացքում փոքր հիդրոէլեկտրակայանների կողմից և էներգիայի վերականգնվող այլ ռեսուրսների (հողմային, արեգակնային, երկրաջերմային և կենսազանգվածի) կիրառմամբ էլեկտրակայանների կողմից քսան տարվա ընթացքում արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիան (հզորությունը) ենթակա է գնման՝ շուկայի կանոններով սահմանված կարգով:

Ելնելով այս նախադրյալներից <<Էներջի ԷՍ ՋԻ ԷՅ>> ՍՊ ընկերությունը նախատեսում է ՀՀ Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնքում իրականացնել արևային կայանի նախագծման, կառուցման և շահագործման աշխատանքներ: Նախատեսվող արևային կայանի էլեկտրահաղորդման լարերը անցնում են Թալին համայնքի տարածքով:

Տարածքը սեփականության իրավունքով պատկանում է << Էներջի ԷՍ ՋԻ ԷՅ >> ՍՊ ընկերությանը, վկայական N 03032020-02-0022:

Կադաստրային ծածկագիրը՝ 02-057-0109-0396

Մակերեսի չափը (հա)՝ 4.25

Նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների:

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի:

Ընկերությունը տեղակայված ՀՀ քաղաք Երևանում, Ն.Ադոնցի փողոց, 8 շենք, բն.82:

Նախատեսվող արևային կայանի դրվածքային հզորությունը պլանավորված է 4.81 ՄՎտ:

Կայանի գեներատորային մասը նախատեսված է կառուցել բազմաբյուրեղային ֆոտովոլտային մոդուլներով, որոնք 24 հատ 200կՎտ ելքային հզորությամբ ինվերտորների փոփոխական լարման ելուստներից մալուխներով միանում են ենթակայանի 0.8կՎ գլխավոր ընդունիչ վահաններին: 6300 կՎԱ տրանսֆորմատորների միջոցով կայանը միանում է ցանցին 110կՎ կողմից <<ԼԱՆՋԻԿ>> 110կՎ օդային գծի մոտակա խարիսխային հենարանին ճյուղավորումով, մոտ 100մ ներանցումով (ՏՊ-151-110/1288-Հ, 28.12.2020թ.): Ըստ <<ՀԷՅ>> ՓԲԸ

տեխնիկական պայմանների նախատեսված է 110կՎ լարման կողմում տեղադրել երկկողմ հաշվարկի սարքեր, որը և համարվում է որպես հաշվառման կետ:

4810կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտոէլեկտրական կայանը (ԱՖԷԿ) նախատեսվում է կառուցել Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնքում՝ 40.3630՝ աշխարհագրական լայնության և 43.9129՝ աշխարհագրական երկայնության կոորդինատներով, ծովի մակերևույթից 1551մ բարձրության վրա: Տարածքում տարեկան արևափայլի տևողությունը կազմում է 2629 ժամ, իսկ արեգակնային ճառագայթումը միավոր մակերեսին՝ 8133ՄՋ/մ2/:

Կայանի գեներատորային մասը իրենից ներկայացնում է հեծանային տիպի հենարանների վրա ամրացված, հորիզոնի նկատմամբ 20՝ թեքվածությամբ, գետնից առնվազն 50սմ բարձրության վրա (ձնածածկույթի առավելագույն տասնօրյակային բարձրությունը ձմռան ընթացքում կազմում է 41սմ) 26 հաջորդաբար մոդուլներից՝ 17 և 18 զուգահեռ շղթաներից (String), հավաքված երկու ենթադաշտերից (Sub-array): ՖՎ մոդուլների կոնստրուկցիաները նախատեսված են մինչև 35մ/վ քամու արագության համար (տարածքում քամու առավելագույն արագությունը 24մ/վ) (Տես. շինարարական կլիմայաբանություն ՀՀ ՇՆ II-7.01-2011):

Շղթաների զուգահեռ միացումներն ապահովված է ինվերտորներում, յուրաքանչյուր 17 (18) շղթայի համար նախատեսված է առանձին ինվերտոր: Ընտրված են Longi ֆիրմային արտադրության 21.1% ՕԳԳ-ով, 535Վտ և 540Վտ առավելագույն հզորությամբ միաբյուրեղ LR5-72HBD-535M և LR5-72HBD-540M մոդելի ֆոտովոլտային մոդուլներ՝ համապատասխանաբար 9028 և 1736 հատ: Ինվերտորները Huawei արտադրության, մոդելը Huawei՝ 200կՎտ էլքային հզորության, ցանցային տեսակի, 12 MPPT (Maximal Power Point Tracker) 18 մուտքերով: RS485 ինտերֆեյսի միջոցով նախատեսվում է տվյալների հավաքագրումը և արտապատկերումը, ինչպես նաև մշտական մոնիթորինգ: Ֆոտոէլեկտրական կայանի զբաղեցրած մակերեսը՝ 4.25հա է, մեկ մոդուլի չափսերը՝ 2256x1131x35մմ:

Նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվող նյութատեխնիկական բազան բերված է ստորև՝

Անվանում
Քառանկյուն խողովակ 40*40*1.5
Քառանկյուն խողովակ 30*50*1.5
Եռակցման էլեկտրոդ
Պոլիէթիլենային թաղանթ

Լուծիչ 3լ
Ցեմենտ
սև թերթ տ/գ 4,0*1250*2500
Կտրող սկավառակ 230
Կտրող սկավառակ, 115*1,2*22մմ
խողովակ զսպանակով 2 դ
Տախտակ
մեխ
մետաղալար 1,5մմ
կտրող սկավառակ 125*7
մալուխ կլոր 2*1.5 in-vi
Խիճ ավազակոպճային խառնուրդի
Խամուտ 32-31
Քար Klingspor A 60 115x1x22.23 ALYUMIN 22534
Հեղյուս, պնդողակ, տափօղակ
Պտուտակ տանիքի
Սև մետ. թիթեղ՝ ձևավոր 1000*2000*1.0
Ներկ աերոզոլային
Քար արծիվ 1,9 230x1,9x22 կարմիր
պտուտակ 4.2*25
թել շինարարական 120գ
Խողովակ d=273մմ
Հեղյուս մանեկ տափօղակ
ներկ ակրիլային 2.6կգ
լուծիչ
Հաղորդալար 2*2.5
Հաղորդալար պղնձե 2*4
Սոսինձ ՄԴՖ 400ml
Քար A46 TZ 230*1.9*22.23
Խողովակ ճնշման B20
Ուղղ. մետ. խողովակ 20*30*2.0
Մալուխ զողման 1*25
Մալուխի ծայրակալ
Խամուտ 16-25
Անկյունակ պողպատյա 63*63*5
Մետաղաձուպան 10մմ
Մետաղաձուպան 6մմ

ավագ
Պրոֆիլ U-21
Խամուտ մետաղական 020-022
Խամուտ մետաղական 017-019
Խողովակ 400 մմ
Սփրեյ ունիվերսալ 425մլ Prestij
Հաղորդալար 2*0.75
Պակլի
Փշովի յուղաներկ
պարան
Ուղղ. մետ. խողովակ 100*100*2.0
Ամրան Φ 8 մմ
Թեքում /отвод/ 110*87 BK
Սոսինձ Երկկոմ.ունիվ., 250մլ+50գր
Մալուխ 1*16
Լատունե կց. խող. 12x1/2
Պտուտակ 4.8x100
Շտիր 2*16
ՊԷԹ խող. 75 մմ PN6
ռետ. խողովակ շին
Պոլիէթիլ. երկշերտ խողովակ SN8 250մմ
Էլեկտրոդ УОНИИ 13/55 д.3/ 5 կգ
Քառանկյուն խողովակ 30*30*1.2
Մալուխ 2*4
Ձկան թել
Կցամաս խողովակի
Խողովակ /ռետինե/ D=25
Խողովակ 10մմ
Շվեյեր հեծան
Քառանկյուն խողովակ 30*40*2
Ռեզինե պարան կռուչոկով 080

Նախատեսվող գործունեության իրականացման համար ներգրավված տեխնիկական միջոցների անվանացանկը ներկայացված է ստորև՝

Անվանում

SHACMAN SX3255DR384

SHAANXI SX3254JM384

Կամազ 6520

Ուրալ 63685-

Կամազ KO-505A

Թրթուրավոր էքսկավատոր CAT 345BACCC01014

ա/մ ԿԱՄԱԶ

Թրթուրավոր էքսկավատոր Komatsu PC400-7

Գազ 66

UAZ 31519

Բուլդոզեր Komatsu D65EX-16

Komatsu WB93R-5E0 № F64803, էքսկավատոր -ամբարձիչ backhoe Loader

KAMAZ (Kamaz-5511) Բետոնախառնիչ

Uaz 23632 Pickup

Komatsu PC 200

ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

– ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

– ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

– ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

– ,Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

– ,Կենդանական աշխարհի մասին ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

– ,Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:

– ,Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու

առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

– Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

– ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

– ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

– ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը:

– ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը:

– ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ.-ի N138 հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում աղմուկի սանիտարական նորմերը:

– ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:

– ՀՀ առողջապահության նախարարի 17.05.2006թ.-ի N 533-Ն հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման հիգիենիկ նորմերը,

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Արևային ֆոտովոլտային կայանի տարածքը վարչատնտեսական առումով գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանում, Կաթնաղբյուր գյուղից 0.5կմ հարավ-արևմուտք և զբաղեցնում է 4.25 հա տարածք: Կաթնաղբյուր գյուղը Թալին քաղաքի հետ կապված է 4.0կմ երկարությամբ ասֆալտապատ ճանապարհով: Հնում գյուղը կոչվել է Արենի կամ Քաղենի, ապա այստեղ հաստատվելով թուրքական ցեղերը, գյուղն անվանեցին Մեյրիբան (Մեհրեբան, Մեհրիբան, Մեհրիբանլու, Մեհրիբանլի, Մեհրիպան, Մեհրիվան, Միհրևան), որը նշանակում է գեղեցկուհի: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո, այստեղ կրկին վերահաստատվեցին հայերը: Մինչև XX դարի վերջերն այս տարածաշրջանում կողք կողքի բնակվում էին դարավոր թշնամի երկու ժողովուրդներ: Այնուհետև թուրքերն ստիպված եղան հեռանալ հայկական այս գյուղից: Գյուղն, որպես հայկական գյուղ նշվում է միայն 1915 թվականի մեծ գաղթից հետո՝ շնորհիվ տեղահանվածների, որոնք էլ հաստատվելով գյուղում այն կրկին շենացրին և հայացրին: Այս գաղթական ժողովուրդն էլ գյուղն անվանեցին Կաթնաղբյուր (19.04.1950 թ.)՝ շնորհիվ սառնորակ ու քաղցրահամ ջրի: Սակայն գյուղի մասին հավաստի տվյալներ չեն պահպանվել: Առաջին փաստաթուղթն 1933 թվականի կենտկոմի որոշումն է, որով գյուղն վերածվեց կոլեկտիվ տնտեսության և անվանվեց ,Մյուտի անվան կոլտնտեսություն: Խորհրդային կառավարության նոր բարեփոխումների հետևանքով կենտկոմի 1977 թվականի հունվարի 1-ի որոշմամբ գյուղն վերածվեց խորհրդային տնտեսության, իսկ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո (1991 թ.) գյուղում տիրեց անհատական տնտեսական համակարգը:

Համաձայն 2008թ-ի մարդահամարի տվյալների Կաթնաղբյուրի բնակչությունը կազմում է 1318 մարդ:

Լեռնագրական տեսակետից տեղամասի տարածքը հարում է Հայկական հրաբխային բարձրավանդակի Արագած-Սյունիքի ենթամարզի Արագածի լեռնազանգվածի հարավ-արևմտյան լանջին և տեղակայված է 1634-1660մ բացարձակ բարձրությունների վրա: ՀՀ Արագածոտնի մարզը բնութագրվում է համեմատաբար զարգացած գյուղատնտեսությամբ, որի հիմնական ուղղություններն են այգեգործությունը և անասնապահությունը: Մարզում գործում են պահածոների և զինու գործարաններ, հանքարդյունահանող ձեռնարկություններ: Տարածաշրջանի ջրային ցանցը թույլ է զարգացած՝ ապարների բարձր ջրաթափանցելիության և տեղումների սակավության պատճառով, այն հիմնականում ներկայացված է հեղեղատներով, որոնք ունեն սեզոնային բնույթ: Շրջանում գործում է Իրինդ-Արտենի խմելու ջրի ջրատարը: Ոռոգման նպատակով կառուցված է Թալինի ջրանցքը: Խմելու ջրի պաշարներ են ծառայում նաև Արագած լեռան հարավ-արևմտյան լանջին առկա աղբյուրները: Շրջանի կլիման բնութագրվում է խիստ ձմեռներով և շոգ ամառներով: Նվազագույն ջերմաստիճանը կազմում է շուրջ -31° , առավելա՞ույնը՝ $+40^{\circ}$: Տեղումների տարեկան միջին քանակը կազմում է 400-500մմ: Տարածաշրջանը գտնվում է սեյսմիկ անկայուն գոտում, որտեղ երկրաշարժի ուժգնությունը հասնում է 6-7 բալի ըստ Ռիխտերի սանդղակի: Տարածաշրջանը էլեկտրիֆիկացված և գազաֆիկացված է, համեմատաբար զարգացած է ճանապարհային ցանցը: Էլեկտրաէներգիայի մատակարարումը կատարվում է հանրապետական միացյալ էլեկտրահամակարգից:

Տեղամասի երկրաբանական կառուցվածքը

Շրջանի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են ստորին պլիոցենից մինչև չորրորդական հասակի բազմատիպի ապարներ, որոնց ստրագրաֆիական կտրվածորը ըստ Վ.Ամարյանի ներայացված է հետևյալ կերպ (ներքևից վերև):

Ստորին պլիոցեն: Ըստ Վ.Ամարյանի, այս հասակին են պատկանում Արտենի լեռան ռիոլիտապեռլիտային լավաները, ինչպես նաև Աղին-Բարձրաշենյան հրաբխածին-բեկորային հզոր հաստվածքը: Արտենի լեռան լավային ապարները մերկանում են շրջանի հարավ-արևմտյան մասում (քարտեզի սահմաններից դուրս): Ներկայացված են հիմնականում ռիոլիտներով և պեռլիտներով ու երկրորդական նշանակության վանակատով և պեմզաներով:

Աղին-Բարձրաշենյան հաստվածքի ապարները մերկանում են շրջանի հյուսիս-արևմտյան մասում (քարտեզի սահմաններից դուրս), ներկայացված են տուֆաբեկչիաներով և տուֆակոնգլոմերատներով, որոնք հերթափոխվում են անդեզիտներով և մասնակիորեն անդեզիտաբազալտներով, իսկ հիմքում՝ կանաչամոխրագույն կավերով ու ավազաքարերով:

Վերին պլիոցեն: Ներկայացված է բացառապես հրաբխային ապարներով, որոնք գրավում են ընդարձակ մակերես: Այս հաստաշերտի ստորին մասը ներկայացված է թթու կազմի 20-30մ հզորությամբ պեմզամոխրային առաջացումներով, որոնք ծածկված են անդեզիտաբազալտներով:

Ստորին չորրորդական: Ներկայացված է անդեզիտային և անդեզիտադացիտային կազմի հզոր լավային ծածակոցով, որը լայն տարածում ունի Թալին քաղաքի շրջանում և մերկանում է դրա հյուսիսային, հյուսիս-արևմտյան մասում ընդարձակ տարածության վրա: Անդեզիտները ներկայացված են ոչ պինդ, համեմատաբար ծակոտկեն ու փխրուն ապարներով, որոնց գույնը ըստ խորության սովորաբար փոխվում է: Ծածկոցի վերին հատվածում դրանք մուգ մոխրագույնից սև գույնի են, դեպի ներքև անցնելով մոխրագույնի և բաց մոխրագույնի: Դրանց մակերեսն ինտենսիվ լվացված է և անհարթ՝ ներկայացված քարքարոտ բլրատիպ ռելիեֆով:

Միջին չորրորդական: Ներկայացված է հիմնականում հրաբխային տուֆերով, առանձին տեղերում անցնում են պեմզաների: Հրաբխային տուֆերը համատարած ծածկոցների և առանձին անկանոն ձևի տուֆակուտակների ձևով ծածկում են ստորին չորրորդական անդեզիտների և անդեզիտադացիտների հաղմահարված ու մասամբ լվացված մակերեսները, լցնելով հին ռելիեֆի ցածրադիր մասերը: Դրանք

ներկայացված են մոխրավարդագույն, մանուշակագույն երանգներով՝ միատարր ապակենման պեմզայի, հրաբխային խարամի, ինչպես նաև այլ հրաբխային ապարների ներփակումներով:

Մանրադիտակի տակ տուֆերի ստրուկտուրան բյուրեղաքարաբեկորային է, կազմված պլագիոկլազի (անդեզին-լաբրադոր), պիրոքսենի (ավգիտ, հիպերստեն), երբեմն բիոտիտի բեկորներից, ամրացած ապակենման, տեղ-տեղ մանրաբյուրեղային ցեմենտացնող մոխրագույն զանգվածով:

Դրանց հզորությունը հասնում է 10-15մ-ի:

Միջին չորրորդականի կտրվածքն ավարտվում է ավկալային անդեզիտադացիտների և դացիտների (Դավթաշեն և Սասնաշեն գյուղերի շրջակայք) փոքր հզորության լավային ծածկոցներով:

ժամանակակից առաջացումներ: Ներկայացված են հիմնականում այլուվիալ-պրոյուվիալ և դեյուվիալ նստվածքներով՝ կավերով, կավավազներով, կոպճավազներով և այլն: Դրանք շրջանում ունեն սահմանափակ տարածում և ոչ մեծ հզորություն (0.1-2.0մ) ու միայն Արտենի լեռան ստորոտներում դրանց հզորությունը հասնում է մինչև 10մ-ի:

Շրջանում նկատվում են մի շարք հրաբխային խարամի կոների ելքեր, որոնք պատկանում են Արագած լեռան հրաբխային կառույցներին: Դրանց թվին է պատկանում Կաթնաղբյուրի կառույցը, որը գտնվում է Կաթնաղբյուրի տուֆերի հանքավայրից արևելք, Կաթնաղբյուր գյուղից շուրջ 1.0կմ հարավ:

Ընդհանուր երկրաբանություն

Տեղամասի երկրաբանական կառուցվածքը բավականին պարզ է: Դրանում մասնակցում են հետևյալ ապարները (լիթոլոգիական կտրվածքը ներքևից վերև).

Ստորին չորրորդական: Անդեզիտադացիտներ և դացիտային տուֆեր:

Միջին չորրորդական: Հրաբխային տուֆեր:

ժամանակակից առաջացումներ:

Անդեզիտադացիտները մերկանում են տեղամասի շրջակայքի տարբեր մասերում, մասնավորապես Եղնիկ, Կաթնաղբյուր և Ակունք գյուղերի շրջակայքում: Անդեզիտադացիտները հիմնատակում են դացիտային տուֆերին:

Մակրոսկոպիկ դրանք ոչ այնքան ամուր, տեղ-տեղ նույնիսկ փխրուն, մոխրագույն և մուգ մոխրագույն, գրեթե սև լավային ապարներ են: Ապարի ընդհանուր մենաքարային ֆոնի վրա առանձնանում են դաշտային սփաթի ներփակումներ, որոնք ապարին տալիս են պորֆիրային կառուցվածք: Անդեզիտադացիտների հզորությունը հասնում է 50-ից 100մ-ի:

Դացիտային կազմի տուֆալավաները մերկանում են տեղամասի շրջակայքի արևմտյան մասում: Դրանք ներկայացված են մուգ մոխրագույն, գրեթե սև խոշորապորֆիրային կառուցվածքով ապարներով:

Ապարի հիմնական զանգվածի ստրուկտուրան հիալոպիլիտային է, իսկ ներփակումները՝ միկրոլիտային: Ապարի 18-20 տոկոսը կազմող ներփակումները ներկայացված են խոշոր, մինչև 3-4մմ մեծության թեփուկավոր ու պրիզմայաձև պլազիոկլազի և պիրոքսենի բյուրեղներով ու մագնետիտի անկանոն հատիկներով: Դրանց հզորությունը ըստ Վ.Ամարյանի հասնում է մի քանի տասնյակ մետրերի:

Միջին չորրորդականի հրաբխային տուֆերը տեղամասում ունեն շերտաձև, հորիզոնականին մոտ տեղադրում: Դրանք ներկայացված են արթիկի տիպով և իրենց կազմով, գունավորմամբ և դեկորատիվ հատկություններով տարբերվում են երևանլենինականյան տիպի տուֆերից: Արթիկի տիպի տուֆերին բնորոշ է լավային բեկորների և հրաբխային ապակու ներփակումների առկայությունը: Այս տուֆերը կազմված են մանրաբեկորային ավազախարամային և հրաբխային ապակու զանգվածում ընկղմված կարմրավուն, մոխրավուն պեմզայի ներփակումներով, որոնց չափերը տատանվում են 1-2մմ-ից 4-5սմ-ի սահմաններում և հիմնականում տափակ-ոսպնյակաձև են: Տուֆերի զանգվածում հազվադեպ հանդիպում են նաև հին լավաների (անդեզիտադացիտների, դացիտների) տձև, թույլ հղկված 1-2մմ-ից մինչև 2սմ չափերով բեկորներ:

Տեղամասի տուֆերի հաստվածքն ունի մեղմաթեք անկում: Հետախուզման սահմաններում տուֆային հաստվածքի ընդհանուր հզորությունը տատանվում է 11.0-ից 12.3մ-ի սահմաններում, կազմելով միջինը 11.64 մ: Տուֆերի հաստվածքի վերին հատվածները ներկայացված են խիստ ձեղքավորված, հողմահարված

տուֆերավ: Դրանց հզորությունը տատանվում է 1.3-ից 2.3 մ-ի սահմաններում, կազմելով միջինը 1.80մ: վերջիններս աստիճանաբար անցնում են թարմ, թույլ ճեղքավորված մոխրավարդագույն, վարդագույն տուֆերի (օգտակար հանածո), որոնց հզորությունը տատանվում է 9.7-ից 10.0մ-ի սահմաններում, կազմելով միջինը 9.82 մ:

Տուֆերի հաստվածքի ճեղքավորվածությունը ծագումնաբանորեն կապված է հրահեղուկ զանգվածի սառեցման (անջատման ճեղքեր) և տեկտոնական շարժումների հետ: Տեկտոնական ծագման ճեղքերը սեյսմիկ բնույթի են և հաճախ համընկնում անջատման ճեղքերին: Այս ճեղքերի հատումներն առաջացնում են մեծաբեկոր` հիմնականում պրիզմայածև մենաբարեր:

Մանրադիտակի տակ տուֆերի ստրուկտուրան կրիստալոլիթոկլաստիկային է, ինչը պայմանավորված է թե ապարների և թե միներալների ներկայությամբ: Ըստ պետրոգրաֆիական կազմի տուֆերը բավականին միատարր են, կազմված միներալների բեկորներից, որոնցում գերակշռում են հիալոպիլիտային և միկրոլիտային կառուցվածքի 0.3-1.7սմ չափերի էֆֆուզիվ ապարների (անդեզիտադացիտների) բեկորները: Միներալների բեկորները ներկայացված են մինչև 0.5մմ չափերի պլագիոկլազով և հիպերստենի ու պիրոքսենի եզակի բյուրեղներով:

Արթիկի տիպի տուֆերի առաջացումը տեղի է ունեցել դացիտային կազմի շիկացած հրաբխային մոխրի , պեմզայի, հրահալոցքային լավայի մնացորդների և խառնարանային գազերի պայթյունային արտավիժման պայմաններում:

Ժամանակակից առաջացումները ներկայացված են դեյուվիալ փուխր-բեկորային, տուֆերի և անդեզիտաբազալտների բեկորներ պարունակող ավազախճային նստվածքներով, որոնց հզորությունը տատանվում է 0.3-ից 0.5մ- ի սահմաններում, կազմելով միջինը 0.40մ:

Տուֆերի հաստվածքի ճեղքավորվածության աստիճանը և ֆիզիկամեխանիկական հատկությունները բավականին կայուն են, միներալոգիական

և քիմիական կազմերը համանման: Տեղամասի սահմաններում տեկտոնական խախտումներ, սողանքային և այլ տիպի գեոդինամիկ երևույթներ չեն արձանագրվել:

Կլիմա

Նախատեսվող գործունեության տարածքը շատ մոտ է Թալին քաղաքին, այդ իսկ պատճառով կլիմայական բնորոշումները կարելի է նույնականացնել: Արագածոտնի մարզի և հատկապես նախատեսվող գործունեության տարածքին բնորոշ է չոր ցամաքային կլիման: Կլիմայական տվյալները ներկայացվել են ստորև ներկայացված աղյուսակներում:

Աղյուսակ 3.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C ⁰												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Թային	1637	-5.2	-4.0	0.6	7.6	12.1	16.4	20.7	20.8	16.4	10.1	3.3	-2.9	8.0	-26.0	38

Աղյուսակ 3.2. Օդի հարաբերական խոնավությունը

	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		հունվարին	օգոստոսին
Թային	1637	76	75	68	64	67	61	56	55	55	69	72	77	66	69	36

Աղյուսակ 3.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Ձնածածկույթ, մմ		
	Ըստ ամիսների											տարեկան	Առավելագույն տասնօրյակային ձնածածկույթը	Տարվա ձնածածկույթի օրերը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11				
										10	11	12			

Թալին	2	2	3	5	7	5	3	2	2	3	2	2	438	64	84	137
	5	7	7	7	9	2	2	2	0	5	8	4				
	1	2	3	3	3	6	4	5	6	3	5	1	67			
	8	5	8	2	7	3	1	2	7	6	0	9				

Աղյուսակ 3.4. Արևափայլի տևողությունը

Բնակավայրի անվանումը	Տևողությունը ըստ ամիսների, ժամ												Տարեկան գումարային
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
Թալին	102	130	166	178	228	293	338	326	286	216	137	102	2502

Աղյուսակ 3.5. Քամու պարամետրերը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մեծություն	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Անհղումը	Միջին արագությունը	Միջին տարեկան արագություն մ/վ	Միջին արագությունը քամիներով	Հաշվարկային և արագությունը		
			Միջին				ըստ հիղությունների								20	50	100
			Հյուսիսային	Հյուսիս-Արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ-Արևելյան	Հարավ (Հվ)	Հարավ-Արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)							
1	2	3	4	5	6	7	8	9	10	1	12	13	14	15	16	17	18
Թալին	834.9	հուն	29	9	1	2	1	3	3	5	33	2.2	1.9	49	26	29	31
			2.	2	2.6	2.	2.	2.2	2.	3.							
		ապր	22	8	1	2	1	4	4	7	33	2.2					
			3.3	2	2.6	3.6	2.9	3.	3.	4.1							
		հուլ	31	8	9	2	1	3	3	9	36	2.2					
			3.5	2	2.4	3.2	2.	2.7	2.7	4.							
հոկ	31	9	1	2	15	3	3	7	42	1.8							
	2.	2	2.4	3.0	2.	2.	2.	3.9									

Մթնոլորտային օդ

Օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության ,Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոնե (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Հաշվի առնելով այն, որ Թալին համայնքում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները բացակայում են, սույն հայտում բերվում են օդային ավազանի ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքները:

ՀՀ բնակավայրերի (բացառությամբ Երևան, Վանաձոր, Արարատ, Հրազդան և Գյումրի քաղաքների) մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները ներկայացված են ստորև, որոնց հաշվարկները կատարվել են ըստ տվյալ բնակավայրի ազգաբնակչության թվաքանակի: ՀՀ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակը ընդունված է համարել ՀՀ-ի

ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) 2011թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ վիճակագրական տեղեկագրում բերված տվյալները: Համաձայն 2011թ.-ի ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկագրի՝ Թալինի համայնքում բնակչության թվաքանակը կազմել է 6930 մարդ: Ելնելով նշված թվաքանակից և ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքներից, Թալին համայնքում աղտոտիչների ֆոնային կոնցենտրացիաների արժեքները գնահատվում են հետևյալ տիրույթում. փոշու մասնիկներ՝ 0,2 մգ/մ³, ածխածնի մոնօքսիդ՝ 0,4 մգ/մ³, ազոտի երկօքսիդ՝ 0,008 մգ/մ³ և ծծմբի երկօքսիդ՝ 0,02 մգ/մ³: Նշված մակարդակները չեն գերազանցում ՀՀ ազգային նորմերը (ՀՀ որոշում 160-Ն, 2006 թ.), բացառություն է կազմում ընդհանուր փոշու մասնիկները, որոնց ֆոնային կոնցենտրացիան մոտ 1.33 անգամ գերազանցում է գործող ՍԹԿ (ՍԹԿփոշի=0,15 մգ/մ³):

Մթնոլորտն աղտոտող որոշ նյութերի ֆոնային կոնցենտրացիաները՝ հաշվարկված ըստ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակի (2011թ.-ի մարդահամար):

Բնակչության քանակը (հազ.)	Նյութերի ֆոնային կոնցենտրացիաները, (մգ/մ ³)			
	փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

Ջրային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության տարածքը հիդրոերկրաբանական տեսակետից աղքատ է գրունտային ջրերով: Տեղամասի երկրաբանական ուսումնասիրությունների ընթացում չեն հայտնաբերվել մինչև 8.0 մ խորության վրա և ըստ գրական տվյալների գտնվում են 120-150մ խորություններում: Նախատեսվող գործունեության տարածքին կից այլ մակերևութային ջրային մարմիններ չկան: Արևային կայանի շինարարական և հետագա շահագործման փուլերում մակերևութային և գրունտային ջրերի բաշխվածությունը որևէ փոփոխության չի ենթարկվելու:

Նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են վերգետնյա ջրային հոսքերը, այս պարագայում ելակետային տվյալների վերլուծությունը և ուսումնասիրությունը անհնարին է դառնում:


Հողային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում Երևան-Գյումրի ավտոճանապարհի հարևանությամբ: Համաձայն տարածքում իրականացված հորատումների, տարածքում հողաբուսաշերտը բացակայում է, առկա են որոշ քարաթփային երևակումներ, իսկ հիմնական տարածքն աչքի է ընկնում տուֆի բնական մերկացմամբ և հողաբուսաշերտի բացակայությամբ և պատահական չէ, որ հարևանությամբ գտնվում են մի քանի տուֆի հանքեր:

Բուսական և կենդանական աշխարհ


Նախատեսվող աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը կրող կենսաբազմազանության և էկոհամակարգերի մասին տվյալները հավաքագրվել և մշակվել են հիմնվելով կենսաբազմազանության վերաբերյալ ՀՀ-ում գերծող օրենքներից, ՀՀ-ի կողմից ստորագրված համապատասխան միջազգային կոնվենցիաներից և պայմանագրերից: Հավաքվել և վերլուծվել է ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տվյալ շրջանին վերաբերող համարյա ամբողջ գիտական տեղեկատվությունը: Հատուկ ուշադրություն է դարձվել տվյալ շրջանին բնորոշ ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բույսատեսակների և կենդանատեսակների առկայությանը և անհրաժեշտ բնապահպանական միջոցառումների մշակմանը:

Նախատեսվող աշխատանքների իրականացման տարածքը գտնվում է Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնքում: Տվյալ տարածաշրջանը ենթարկված է անտրոպոգեն ազդեցության, որի արդյունքում նախատեսվող աշխատանքների իրականացման և հարակից տարածքներում բնական էկոհամակարգերը ներկայումս խիստ փոփոխված և դեգրադացված են, իսկ բուն տարածքում բուսականությունը գրեթե բացակայում է (տես՝ նկար 2):




ՀԱՄԱՉԱՅՆԵՑՎԱԾ Է

Ն/Ն	Ձեռնարկում թցանակավորված	ՍՏՈՐԱԳ.	ԱՆՈՒՆ ԱՉԳԱՆՈՒՆ	ԱՄՍԱԹԻՎ
1	ԹԱԱՆԻ ՀԱՄԱՅՔԱԳԵՏԱՐԱՆ			
2	<<ԷՅ>> ՓԲԸ ՏԵՆ ՏԱՐԵՆ			
3	<<ՄՈՒՍԱԼԵՆ>> Մ/Ճ ԳԿՆ ՃԱՐՏԱՐԱԳԵՏ			
4	<<ՀԱԵՎԱՐԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ ՏԵՆ ՏԱՐԵՆ			
5				

		ԵԿ 110/35կՎ 6300կՎԱ «Էներջի ԷՍ ԶԻ ԷՅ» ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ ԱՐԿԱՑՈՏՆԻ ՄԱՐԶ ԿԱԹՆԱՐԱՐՈՒՄ ԴԱՄԱՅԵՆՄ			
ՆԳՃ	Ս. Հովսեփյան	110/35կՎ ենթակայան էլեկտրատեխնիկական մաս	Փուլ	Թերթ	Թերթեր
Ճարտար.	Ս. Հովսեփյան		Ա	00	34
		ԵԿ 110/35կՎ «Էներջի ԷՍ ԶԻ ԷՅ» Դանձնայնեցման Հատակագիծ	 "ՊՐՈՖԵՆԵՐԺԻ" ՍՊԸ Երևան 2021թ.		

Հայաստանի տարածքում առանձնացվում է 12 ֆլորիստիկ շրջաններ (տես՝ նկար 3): Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Երևանի ֆլորիստիկ շրջանում (*Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները ըստ ակադեմիկոս Ա.Լ. Թախտաջյանի (1954)*), չոր տափաստանային ցածրալեռնային (1000-1600 մ.ձ.մ) և տափաստանային միջինլեռնային (1400-2300 մ.ձ.մ) լանշաֆտային գոտիներում, որով և պայմանավորվում է տարածաշրջանի կենսաբազմազանությունը (տես՝ նկար 4): Բուն ուսումնասիրվող տարածքի բացարձակ բարձրությունները տատանվում են 1540-1560մ-ի սահմաններում:




Նկար 2. Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները

Շրջանի տարածքն անտառազուրկ է: Տիրապետում է կիսաանապատային և տափաստանային բուսածածկույթը: Տարածքի բուսականությունը ներկայացված է հիմնականում կիսաանապատային օշինդրա-էֆեմերային և տափաստանային մոլախոտային բուսականությամբ (*Amaranthus retroflexus*, *Heracleum sosnovskyi*, *Achillea millefolium*, *Centaurea iberica*, *Lepidium ruderales* и др.) и растения, заходящие с окружающих луговых территорий (*Dactylis glomerata*, *Phleum phleoides*, *Poa angustifolia*, *Taraxacum officinale*): Հացազգի և հացազգի-տարախոտային

տափաստանները հիմնականում շյուղախոտ լեռնային տափաստաններ են՝ *Festuca valesiaca* ձևավորումները, բարակոտնուկ սանրավորի (*Koeleria cristata*), ծորնուկ խայտաբղետի (*Bromus variegata*), դաշտավուկ սոխուկավորի (*Poa bulbosa*), սիզախոտ սիզախոտանման (*Phleum phleoides*) և տարազգի բուսականության մասնակցությամբ:

Ուսումնասիրվող տարածքում և նրա շրջակայքում, ըստ առկա գրականության, ՀՀ բույսերի Կարմիր գրքում գնացված տեսակներ կամ դրանց աճելավայրեր չկան:

Այսպիսով, ուսումնասիրվող տարածքում և նրա հարակից տարածքներում բացակայում են ինչպես հազվագյուտ էկոհամակարգեր, այնպես էլ բույսերի հազվագյուտ տեսակներ, քանի որ տարածքը մշտապես գտնվել է մարդկային գործոնի ազդեցության տակ, որի հետ կապված դրանց պահպանության համար հատուկ միջոցառումներ չի նախատեսվում:



Նկար 3. Հայաստանի Հանրապետության լանդշաֆտային գոտիները

Հավաքվել և վերլուծվել է տվյալ տարածաշրջանի ֆաունայի վերաբերյալ գրեթե ամբողջ գիտական տեղեկատվությունը: Հատուկ ուշադրություն է դարձվել տվյալ տարածաշրջանին բնորոշ (ՀՀ կենդանիների Կարմիր գրքում 2010թ.) գրանցված կենդանիների առկայությանը: Տարածաշրջանին բնորոշ կաթնասունները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 3. 1

Կաթնասուններ		Գրականության տվյալները	ՀՀ Կարմիր գիրք	Միջ. Կարմիր ցուցակ
Erinaceus concolor	Սովորական ոզնի	+	-	-
Lepus europaeus	Նապաստակ	+	-	-
Martes foina	Քարակզաքիս	+	-	-
Mustela nivalis	Աքիս	+	-	-
Canis Lupus	Գայլ	+	-	-
Vulpes vulpes	Սովորական աղվես	+	-	-
Cricetulus migratorius	Մոխրագույն համստերիկ	-	-	-
Microtus arvalis	Սովորական դաշտամուկ	+	-	-
Sylvaemus (Apodemus) sylvaticus	Անտառային մուկ	+	-	-
Meriones tristrami	Փոքրասիական ավազամուկ	+	-	-

Տարածաշրջանին բնորոշ թռչունների տեսակային կազմը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 3. 2

Թռչուններ		Գրականության տվյալներ	Հայաստանում նասանյառ	ՀՀ-ում բնադրվող և	Կարմիր գիրք (+) և սև գիրք (++) ցուցակ (++)
Milvus migrans	Սև ցին	-	+	-	-
Accipiter nisus	Լորաճուռակ	+	+	-	-
Buteo buteo	Սովորական ճուռակ	+	+	-	-
Buteo rufinus	Տափաստանային ճուռակ	+	+	-	-
Falco subbuteo	Արտույտաբազե	-	+	-	-
Aquila chrysaetos	Քարարծիվ	+	+	-	+
Falco tinnunculus	Սովորական հողմավար բազե	-	+	-	-
Tringa ochropus	Սևուկ կտցար	-	+	-	-
Columba livia	Թխակապույտ աղավնի	+	+	-	-
Columba oenas	Հոբալ	-	+	-	-
Cuculus canorus	Սովորական կկու	+	-	+	-
Apus apus	Սև մանգաղաթև	+	-	+	-
Calandrella rufescens	Մոխրագույն արտույտ	+	-	+	-
Alauda arvensis	Դաշտային արտույտ	+	+	-	-
Calerida cristata	Փուփուլավոր արտույտ	+	+	-	-
Ptyonoprogne rupestris	Ժայռային ծիծեռնակ	+	-	+	-
Riparia riparia	Առափնյա ծիծեռնակ	+	-	+	-
Hirundo rustica	Գյուղական ծիծեռնակ	-	-	-	-
Delichon urbica	Քաղաքային ծիծեռնակ	+	-	+	-
Motacilla flava	Դեղին խաղտոնիկ	+	-	+	-
Motacilla alba	Սպիտակ խաղտոնիկ	+	+	-	-
Դաշտային ձիուկ	Դաշտային ձիուկ	+	-	+	-
Phoenicurus phoenicurus	Սովորական կարմրատուտ	+	-	+	-
Saxicola torquata	Սևագլուխ չքչբան	+	-	+	-
Oenanthe isabellina	Պարող քարաթռչնակ	+	-	+	-
Turdus merula	Սև կեռնեխ	-	+	-	-
Sylvia communis	Մոխրագույն շահրիկ	-	-	-	-

Muscicapa striata	Մոխրագույն ճանճորս	+	-	+	-
Parus major	Մեծ երաշտահավ	+	+	-	-
Sitta neumayer	Ժայռային փոքր սիտեղ	+	+	-	-
Miliaria calandra	Կորեկնուկ	+	+	-	-
Fringilla coelebs	Ամուրիկ	+	+	-	-
Carduelis chloris	Կանաչ սերինոս	-	+	-	-
Petronia petronia	Ժայռային ճնճուկ	+	-	+	-
Passer domesticus	Տնային ճնճուկ	+	+	-	-
Passer montanus	Դաշտային ճնճուկ	+	+	-	-
Carduelis cannabina	Կանեփնուկ	-	+	-	-
Sturnus vulgaris	Սովորական սարյակ	+	+	-	-
Corvus frugilegus	Սերմնաքաղ	+	+	-	-
Pica pica	Սովորական կաչաղակ	+	+	-	-
Corvus corone	Մոխրագույն ագռավ	+	+	-	-
Corvix corax	Սև ագռավ	+	+	-	-

Սողունների և երկկենցաղների վերաբերյալ տեղեկատվությունը հիմնականում ստացվել է գրականության մշակման վերլուծության հիման վրա: Կապված բնական լանդշաֆտների ոչնչացման հետ, ինչի արդյունքում ոչնչացվեցին սողունների և երկկենցաղների բնական ապրելավայրերը, նրանց տեսակային կազմը զգալի փոփոխությունների է ենթարկվել:

Աղյուսակ 3. 3

Սողուններ և երկկենցաղներ		Գրականության տվյալները	Դաշտային հետ. Տվյալները	ՀՀ Կարմիր գիրք	Միջ. Կարմիր ցուցակ
Typhlops vermicularis	Կույր օձ	+	-	-	-
Eirenis collaris	Վզնոցավոր էյրենիս	+	+	-	-
Vipera lebetina	Գյուրգա	+	+	-	-
Laudakia caucasica	Կովկասյան ագամա	+	+	-	-
Bufo viridis	Կանաչ դողոշ	+	+	-	-

Հետազոտվող տարածքում հանդիպող անողնաշարավորների տեսակային կազմը որոշվել է գրականության տվյալների վերլուծության արդյունքում (տես՝ աղ. 4):

Աղյուսակ 3. 4

Դաս	Կարգ	Ընտանիք	Տեսակ
Միջատներ Insecta	Կարծրաթևեր կամ բզեզներ Coleoptera	Գնայուկ բզեզներ Carabidae	Bembidion lampros
			Harpalus affinis
			Ophonus azureus
			Acinopus laevigatus
			Dixus obscurus
			Ditomus calydonius
			Zabrus trinii
			Calathus ambiguus
			Platytarus umbratus
			Cymindis
			Lesthes sp. 1
			Lesthes sp. 2
			Lebia cyanocephala
			Syntomus obscuroguttatus
		Թերթիկաբեղավորներ Scarabaeidae	Onthophagus sp. Blitopertha lineata
		Սևամարմիններ Tenebrionidae	Dailognatha caraboides Blaps lethifeta pterotapha Opatrum geminatum Pachyscelus musiva Pimelia persica Dissonomus picipes
		Anthicidae	Anthicus sp.
		Տերևակերներ Chrysomelidae	Chrysolina cf. marginata Chrysolina sp. Entomoscelis sacra
		Երկարաբեղիկներ Cerambycidae	Dorcadion scabricolle
		Փղիկներ Curculionidae	Psallidium maxillosum Cleoninae sp.
	Թռչունկներ կամ թիթեռներ Lepidoptera	Ճերմակաթիթեռներ Pieridae	Colias crocea Pontia daplidice Pieris brassicae Pieris pseudorapae
		Nymphalidae	Aglais urticae Vanessa cardui

Ամենայն հավանականությամբ միջատների տեսակային կազմը նույնպես կրել է զգալի փոփոխություններ՝ ևս կապված բնական լանդշաֆտի ոչնչացման հետ: Արդյունաբերության և գյուղատնտեսության հետևանքով առաջացած բուսական ծածկույթի գրեթե լիովին փոփոխությունը հանգեցրեց միջատների տեսակային և քանակական կազմերի զգալի փոփոխություններին:


Կան մի շարք կենդանատեսակներ, որոնք բավականաչափ հանդուրժող են մարդկային միջամտության նկատմամբ, և մնում են տեղում (օրինակ՝ նապաստակը, ոզնին և այլն): Բացի այդ, որոշ տեսակներ կարող են բավականաչափ հարմարվողական կենսակերպ վարել նոր պայմանների նկատմամբ (օրինակ՝ աղվեսը կամ որոշ թռչնատեսակներ):

Այսպիսով, ուսումնասիրվող և հարակից տարածքներում բացակայում են ինչպես հազվագյուտ էկոհամակարգեր, այնպես էլ կենդանիների հազվագյուտ տեսակներ, որի հետ կապված դրանց պահպանության համար հատուկ միջոցառումներ չի նախատեսվում:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Հայաստանի Հանրապետությունում կենսաբազմազանության պահպանումը, հիմնականում, իրականացվում է Բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ) (պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ), որտեղ կենտրոնացած է բուսական և կենդանական աշխարհի տեսակազմի մոտ (60-70)%-ը, ներառյալ հազվագյուտ, վտանգված, անհետացման եզրին հայտնված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը (տես՝ նկար 5):

Ուսումնասիրվող տարածքը անմիջական սահմաններ ԲՀՊՏ-ների հետ չունի: Տարածքին ամենամոտը՝ Արագածի ալպյան Է պետական արգելավայրն է, որի առավել մոտ գտնվող հատվածը տեղակայված է ավելի քան 15 կմ հեռավորության վրա: Ուսումնասիրվող տարածքին մոտ գտնվող բնության հուշարձաններ չկան: Ամենամոտ գտնվող բնության հուշարձանը դա ,Տատիկ քարե բնական քանդակն է, որը գտնվում ՀՀ Արագածոտնի մարզի Դաշտադեմ գյուղում՝ նախատեսվող գործունեության տարածքից շուրջ 8 կմ հեռավորության վրա: Դրա վրա ազդեցությունը բացառվում է հեռավորության և այլ տարբեր պատճառներով:



Նկար 4. Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները

Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային հարաբերությունների լիիրավ անդամ, վավերացրել է կենսաբազմազանությանն առնչվող մի շարք միջազգային բնապահպանական պայմանագրեր, կոնվենցիաներ և համաձայնագրեր, որոնցով ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը նպաստում է շրջակա միջավայրի և կենսաբազմազանության արդյունավետ պահպանությանը:

Եվրախորհրդի Բեռնի կոնվենցիայի ներքո Հայաստանում ,Էմերալդե ցանցի ստեղծման ծրագրի շրջանակներում առանձնացվել են նաև բնապահպանական տեսակետից մի շարք արժեքավոր տարածքներ, որում ներառված 23 տարածքներից 8-ը ընդգրկված են Հայաստանի ԲՀՊՏ-ների համակարգում (<http://emerald.eea.europa.eu/>):

Ուսումնասիրվող տարածքը ներառված չէ ,Էմերալդե ցանցի մեջ և նրա հետ անմիջական սահմաններ չունի: Տարածքին ամենամոտը գտնվում է AM000010 թեկնածու տարածքը, որի առավել մոտ գտնվող հատվածը տեղակայված է 18 կմ հեռավորության վրա:

Սոցիալ տնտեսական պայմանները

Նախատեսվող գործունեության ազդակիր են Արագածոտնի մարզի Թալին և Կաթնաղբյուր համայնքները: Թալին համայնքը իր մասշտաբներով բազմակի անգամ գերազանցում է Կաթնաղբյուր գյուղին:

Նախկինում եղել է Թալինի շրջանի վարչական կենտրոնը: Նախկինում ունեցել է Թալինա, Թալին Մեծ, Թալին Վերին, Թալնո ոտն, Հայի Թալին, Տալին անվանումները: Թալին է վերանվանվել 1978 թվականին: 1964 թվականից դարձել է քաղաքատիպ ավան, իսկ 1955 թվականի վարչատարածքային ռեֆորմից հետո դարձել է քաղաք:


Երևան քաղաքից գտնվում է 68 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 48 կմ:

Այստեղով է անցնում Երևան – Գյումրի միջպետական նշանակության ավտոմայրուղին:

Հնում մտել է Այրարատ աշխարհի Արագածոտն գավառի մեջ: Հնագիտական պեղումներից պարզվում է, որ Թալինը բնակելի է եղել մ.թ.ա. 2-րդ հազարամյակում, իսկ ըստ Թովմա Արծրունու ,Պատմությանե, Թալինը հիմնադրել է Անանիոս Բագրատունի իշխանի կողմից 9-10-րդ դարերում: Այն Թալինա անունով հիշատակվում է Պտղոմեոսի կողմից՝ 2-րդ դար:

Սկսած 7-րդ դարից հաճախ հիշատակվում է, երբեմն որպես գյուղ, երբեմն էլ որպես ավան կամ քաղաք: Քաղաքում կառուցված է Սբ. Աստվածածին կամ Փոքր եկեղեցին, որը կառուցվել է 689 թվականին Ներսես Կամսարական իշխանի կողմից: Քաղաքից հարավ գտնվում է միջնադարյան քարավանատունը, բերդը: Ըստ ուսումնասիրությունների, բերդը կառուցվել է 7-րդ դարում Կամսարական նախարարական տոհմի ներկայացուցիչների կողմից: Բերդի նշանակությունը մեծ է եղել 16-րդ դարից սկսած, երբ թուրք-պարսկական պատերազմների ժամանակ այն արևմուտքից պաշտպանել է Երևանի մատույցները:

Քաղաքը հիմնված է Արագած լեռնազանգվածի հարավային փեշերին, Արտենի լեռան մոտ: Ծովի մակարդակից ունի 1585 մ բարձրություն: Կլիման չափավոր ցամաքային է: Ձմեռները ցուրտ են, հաստատուն ձնածածկույթով: Ամառները շոգ են: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 23-25-ի սահմաններում, հունվարյանը՝ -4,-5-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 400-450 մմ: Բնական լանդշաֆտները չոր տափաստաններ են:



Արագածոտնի մարզի տարածքային քարտեզ

ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ Տեխնոլոգիագական և տեխնիկական լուծումները

«Էներջի ԷՍ ՋԻ ԷՅ» ՍՊԸ-ն նախատեսում է ՀՀ Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնքում իրականացնել արևային կայանի նախագծման, կառուցման և շահագործման աշխատանքներ:

Համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի երկրաշարժադիմացկուն շինարարության նախագծման նորմեր N 102 -Ն հրամանի ՀՀ Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնքը պատկանում է 1-ին աստիճանի սեյսմիկ գոտուն առավելագույն հորիզոնական արագացման $A=0,3g$:

Սույն լրակազմի աշխատանքային գծագրերի հիմքը հանդիսանում է՝ , Բաշխման ցանցին միացման Տեխնիկական պայմանները՝ N ՏՊ-151-110/1232-Հ, 25.05.2021թ. գրությամբ, տրված ,Հայաստանի էլեկտրական ցանցերե ՓԲԸ կողմից: Ինժեներահետախուզական նյութերը շահագրգիռ կազմակերպությունների հետ համաձայնությունները:

Սույն լրակազմի ծավալի մեջ մտնում է 110ԿՎ տրանսֆորմատորային ենթակայանը ԵԿ-ի հողանցման համակարգերը:

Համաձայն տեխնիկական պայմանների, ՀՀ Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնքի տարածքում կառուցվող ,Էներջի ԷՍ ՋԻ ԷՅե 5մՎԱտ դրվածքային հզորությամբ արևային էլեկտրակայանը Հայաստանի էլեկտրական ցանցին միացնելու համար նախատեսվում է կառուցել ,Էներջի ԷՍ ՋԻ ԷՅե 6300ԿՎԱ հզորությամբ 110/35/6կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայան: Ենթակայանը տեղակայված է Թալին համայնքով անցնող ,Լանջիկե 110 ԿՎ լարման ՕԳ-ի մոտակայքում տեղակայված Թալին համայնքի բնակավայրից դուրս ,Էներջի ԷՍ ՋԻ ԷՅե ՍՊԸ-ին պատկանող առանձին ցանկապատված տարածքում: Ենթակայանի սնումն իրականացվում է ,Լանջիկե 110ԿՎ լարման օղային գծից, ճյուղավորման սխեմայով, կառուցելով 30զմ երկարությամբ 110կվ լարման ՕԳ մոտակա խարսխային հենարանից դեպի ,Էներջի ԷՍ ՋԻ ԷՅե ԵԿ-ի 110ԿՎ լարման մուտքային պորտալը: ,Էներջի ԷՍ ՋԻ ԷՅե ԵԿ-ն ,Էներջի ԷՍ ՋԻ ԷՅե Արևային կայանի 35 կվ լարման ենթակայանին միանում է 2.9Կմ երկարությամբ Օղային գծով: Ենթակայանը տեղակայված է ծովի մակարդակից 1640մ բարձրության վրա և նախագով նախատեսված է ըստ հետևյալ կլիմայական պայմանների.

Քամի՝ 30մ/վ, սառցակեղև՝ 15մմ, օդի ջերմաստիճան -20-ից +30:

,Էներջի ԷՍ ՋԻ ԷՅե 110/35/6կվ ԵԿ-ի էլեկտրական միացությունների միագծանի սխեման մշակված է համաձայն 110-4H տիպային սխեմայի. Բարձր և միջին լարման

կողմում անջատիչներով գիծ-տրանսֆորմատորի բլոկ, գծերի կողմից երկկողմ հողանցման դանակներով բաժանիչներով:

,Էներջի ԷՍ ՋԻ ԷՅԵ Էնթակայանի 110ԿՎ ԲԲՍ-ում նախատեսվում է տեղադրել 110/35/6ԿՎ լարման եռաֆազ եռափաթույթ ТДТН-6300 110/10ԿՎ մակնիշի ուժային տրանսֆորմատոր: Տրանսֆորմատորի 110 ԿՎ լարման շղթաներում տեղադրվում են – ВРС-110 НС-35-20/1600У մակնիշի էլեգազային անջատիչ, ТФ3М -110 մակնիշի հոսանքի տրանսֆորմատոր, НКФ -110 մակնիշի լարման տրանսֆորմատոր, երկու հատ երկկողմանի հողանցման դանակներով РНДЗ-110-2Б/1000У1 մակնիշի բաժանիչ և ОПН-110 մակնիշի գերելարումից արգելափակիչ: 110 ԿՎ ԲԲՍ-ի մուտքում նախատեսված է տեղադրել ПСЛ-110Я2 մակնիշի մետաղական գծային պորտալ ,Լանջիկե ՕԳ-ից ներանցում իրականացնելու համար:

110ԿՎ ԲԲՍ-ի դողային համակարգի շղթաները հավաքվում է АС-150/24 հաղորդալարով: ԵԿ-ի 110ԿՎ ԲԲՍ-ում աշխատանքի բնականոն ռեժիմում հաղորդալարերերի հեռավորությունը հողի մակերևույթից պետք է լինի 3.7մ-ից ոչ պակաս:

,Էներջի ԷՍ ՋԻ ԷՅԵ Էնթակայանի 35ԿՎ ԲԲՍ-ում նախատեսվում է տեղադրել 35 ԼՎ լարման բլոկ վակուումային անջատիչով: 35 կՎ բլոկի վրա նախատեսվում է տեղադրել մուտքային և ելքային երկու հողանցման դանակներով բաժանիչներ, լարման և հոսանքի տրանսֆորմատորներ, հենարանային մեկուսիչներ և գերլարման արգելափակիչներ: 35 ԿՎ ՕԳ-ն ԲԲՍ-ի դողային համակարգին միացնելու համար նախատեսվում է տեղադրել մուտքային և ելքային երկու հողանցման դանակներով բաժանիչներ, լարման և հոսանքի տրանսֆորմատորներ, հենարանային մեկուսիչներ և գերլարման արգելափակիչներ: 35ԿՎ ՕԳ-ն ԲԲՍ-ի դողային համակարգին միացնելու համար նախատեսվում է տեղադրել երկու հատ ,ПС-35Я-2Ե մակնիշի գծային պորտալներ АС-70/11 մակնիշի հաղորդալարով: 35 ԿՎ ԲԲՍ-ի դողային համակարգի շղթաները հավաքվում են АС-70/11 մակնիշի հաղորդալարերով: ԵԿ-ի 35 ԿՎ ԲԲՍ-որի աշխատանքի բնականոն ռեժիմում հաղորդալարերի հեռավորությունը հողի մակերևույթից պետք է լինի 3.2մ-ից ոչ պակաս:

6 ԿՎ սարքավորումները և ռելեական պաշտպանության ու սեփական կարիքների վահանները տեղադրվում են Ղեկավարման Վահանի մոդուլում:

110ԿՎ Էնթակայանի շանթապաշտպանությունը ապահովվում է պորտալների վրա տեղադրված շանթարգելներով: Էնթակայանի սարքավորումները արտաքին գերլարումներից պաշտպանելու համար տրանսֆորմատորի 110, 35, 6ԿՎ ներանցիչների վրա տեղադրվում են գերլարման արգելափակիչներ: 110 ԿՎ սարքավորումները տեղադրվում են հավաքովի մետաղական հենարանների վրա: Հենարանները ամրացվում են F-1, F-2 և F-5 մակնիշի հիմքերի վրա: 35 ԿՎ սարքավորումները մոնտաժվում են ЛЖ-4,4 մակնիշի Ե/Բ տապաստների վրված

հավաքովի վրա տեղադրված հավաքովի մետաղական կոնստրուկցիայի վրա: 35 ԿՎ լարման հենարանային մեկուսիչները մոմտաժվում են ՈՋ-2.8 մակնիշի Ե/Բ տապաստների վրա տեղադրված մետաղական կոնստրուկցիայի վրա: ,ՈՇՈ-110Յ2Ե և ,ՈՇ -35Յ2Ե մակնիշի գծային պորտալները տեղադրվում են Ո-14 մակնիշի Ե/Բ հիմքերի վրա:

ԵԿ-ի հողանցման համար նրա շուրջը նախատեսվում է ստեղծել հողանցման եզրագծից, որին ոչ պակաս, քան երկու կետում պետք է միացնել ենթակայանի սարքավորումների մետաղական իրանները: Հողակցման եզրագիծն իրականացվում է 4x40 շերտապողպատից (հորիզոնական հողանցիչ) և 2.5մ երկարությամբ 56x55x5մմ անկյունային պողպատից (ուղղահայաց էլեկտրոդ): Համաձայն ԷՄՆԸՊ ՍԿ-ի VI գլխի 33-րդ կետի ենթակայանի հողակցման սարքի դիմադրությունը տարվա ցանկացած եղանակին չպետք է գերազանցի 0.5 Օհմ-ից: Հողանցման կոնտուրի մոնտաժումից հետո անհրաժեշտ է ստուգել հողանցման սարքավորման դիմադրությունը: Չբավարարելու դեպքում ավելացնել էլեկտրոդների քանակը նորմային հասցնելու համար: Բոլոր սարքավորումների լարման տակ չգտնվող մետաղական կոնստրուկցիաները նախագծով նախատեսված է հողանցել, միացնելով հողակցման սարքվածքին առնվազն երկու կետով: ԵԿ-ի շրջակայքում տեղակայված հենարանի հողանցման սարքվածքը միացնել համալիրի հողանցման սարքին, առնվազն երկու կետով: Հողանցիչները սարքավորումներին մոտադական իրաններին միացնել հեղույսներով, իսկ մետաղական կառուցվածքներին՝ եզրածածկ եռակցումով:

Ենթակայանի սեփական կարիքների սնման համար տրանսֆորմատորների 6ԿՎ լարման կողմում նախատեսված է տեղադրել 6/0.4 ԿՎ 40ԿՎԱ հզորության տրանսֆորմատոր: Տրանսֆորմատորի սնումը իրականացվում է ուժային տրանսֆորմատորների 6 ԿՎ լարման ելքից: Սեփական կարիքների վահանից սնվում են ենթակայանի ղեկավարման, պաշտպանության և օպերատիվ շղթաները, համալիրի լուսավորությունը և ջեռուցման համակարգը: Ենթակայանի արտաքին լուսավորությունը նախատեսված է ԼԵԴ լամպերով լուսարձակներով:

Էլեկրաէներգիայի կոմերցիոն հաշվարկի համար 110ԿՎ լարման կողմում առանձին արկղի մեջ նախատեսվում է տեղադրել երկկողմ հաշվարկ իրականացնող էլ էներգիայի հաշվարկի էլեկտրոնային սարք:

Բոլոր էլեկտրամոնտաժային աշխատանքները կատարել համաձայն ՈՄՅ -3, ՇՈՍՈ 3.05.06-85 և ՇՈ 102-76 պահանջների:

Տարածքը պետք է ապահովել սպասարկման համար անհրաժեշտ արահետներով, ջրամատակարարման և էլեկտրամատակարարման համակարգերով:

Ենթակայանի տարածքում նախատեսվում է հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչներ:

Տարածքն անբողջությամբ գտնվում է տեսահսկման գոտում:


Ենթակայանի վրա նախատեսվում է տեղակայել մետեոկայան:

Նախատեսվող գործունեության համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներն և նյութերը մատակարարվելու են Երևանից: Տարածքում փակ ժամանակավոր պահեստարանում կարճաժամկետ պահպանվելու են մինչև կիրառվելը: Տարածքում երկարաժամկետ կտրվածքով շինանյութերը և տեխնիկական միջոցներ չեն պահպանվելու, այդ իսկ պատճառով պահման լրացուցիչ միջոցառումներ չեն նախատեսվում:

Կայանի շահագործման ժամանակային երաշխիքը կազմում է 25 տարի, ենթակայանի համար՝ 30 տարի:

Արևային կայանի գրադեցրած տարածքը 4.25հա
Շարքերի մեջ եղած հեռավորությունը 6.8մ

- 4x18 - 110
- 4x20 - 1
- 4x22 - 4
- 4x24 - 8
- 4x14 - 4
- 4x12 - 3
- 4x10 - 4
- 4x8 - 3



Համաձայնեցված է
«ԵՎՐՈՀՈԳՐՈՒՆԵՐՈՒՄ ՍՊԸ
ՓՈՐՁԱՔՍՆՈՒԹՅՈՒՆ
«...» «...» 20...

ՊԱՅՄԱՆԱՎԱՆ ՆՇԱՆՆԵՐ

— Հողատարածքի եզրագիծ


4x18 Արևային վահանակների խումբ

22/02/21-ԸԴ


<<ԷՆԵՐՋԻ ԷՍ ԶԻ ԷՅ>> 4.81Ա/4ր դրվածքային հզորության արևային էնկրոսկոպայանի նախագիծ կաթնաբյուր համայնքում

Թիվ	Ձևի թիվ	Վճար	Քանակ	Երկրորդ	Պրակ	Փուլ	Թիվեր	Թիվեր
Լ.ԳՏ	Գ.Վարդանյան				22022017	Ընդհանուր դրույթներ	Ա	9
Նախագծից	Գ.Վարդանյան				22022017	ԱՐԵՎԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿՆԵՐԻ ԲԱՇԽՎԱՆՈՒԹՅՈՒՆ	<<ԷՆԵՐՋԻ ՓՈՒՑՈՒՄՔԵՆ>> ՍՊԸ Լիցենզիա #ՊԼ 17691	
Արտաձև	Ռ.Դզիշյան				22022017			


Արևային կայանի հատակագիծը



Նկար 7. Կրող կոնստրուկցիաները



Նկար 8. Էներջի ԷՍ ՋԻ ԷՅԵ ՍՊԸ արևային կայանի տեղադիրքը և կոորդինատները



Հենասյուն 1 35 կՎ
8407547.598, 4470606.249
Հենասյուն 2 35 կՎ
8407476.851, 4470709.301
Հենասյուն 3 35 կՎ
8407389.126, 4470837.087
Հենասյուն 4 35 կՎ
8407309.890, 4470952.506
Հենասյուն 5 35 կՎ
8407230.654, 4471067.926
Հենասյուն 6 35 կՎ
8407151.418, 4471183.345
Հենասյուն 7 35 կՎ
8407070.302, 4471298.901
Հենասյուն 8 35 կՎ
8406992.957, 4471414.192
Հենասյուն 9 35 կՎ
8407004.543, 4471503.443
Հենասյուն 10 35 կՎ
8407016.128, 4471592.694
Հենասյուն 11 35 կՎ
8407032.401, 4471699.460
Հենասյուն 12 35 կՎ
8407048.687, 4471806.226
Հենասյուն 13 35 կՎ
8407064.815, 4471912.004
Հենասյուն 14 35 կՎ
8407057.210, 4472019.736
Հենասյուն 15 35 կՎ
8407049.675, 4472126.470
Հենասյուն 16 35 կՎ
8407001.148, 4472245.995
Հենասյուն 17 35 կՎ
8406953.028, 4472364.516
Հենասյուն 18 35 կՎ
8406811.166, 4472419.098
Հենասյուն 19 35 կՎ
8406669.784, 4472391.767
Հենասյուն 20 35 կՎ
8406532.173, 4472365.164
Հենասյուն 21 35 կՎ
8406394.363, 4472338.523

Հենասյուն 22 35 կՎ
8406325.279, 4472365.045
Հենասյուն 23 35 կՎ
8406269.508, 4472493.45

Շինարարական աշխատանքներ

Շինարարական աշխատանքները իրականացվելու են ըստ օրացուցային պլանի: Ներկայացվում է շինարարական աշխատանքների ցանկը, ժամանակացույցը և աշխատակազմը:

հհ	Աշխատանքի անվանումը	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱԹՆԵՐՈՎ																				
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21
1	Նախաշինարարական, քանդման և ապամոնտաժման աշխատանքներ	■																				
2	Նախնական ինժեներական աշխատանքներ	■	■																			
3	Հողային աշխատանքներ		■	■																		
4	ԱՑԷԿ-ի 35/0.4կՎ լարման ներկայանի շինարարություն			■	■	■	■	■	■	■	■											
5	Կողղ կոնստրուկցիաների հիմքերի, հենասյունների տեղակայում, շինարարի տեղափոխում	■	■	■	■	■	■	■	■	■	■											
6	Կողղ կոնստրուկցիաների ձգում, տարածքի ցանկապատում							■	■	■	■	■										
7	Մարդիկների անջնացում			■	■	■																
8	Հողանցման ցանցի մոնտաժ				■	■	■															
9	Արտաքին լուսավորության համակարգ և օդերևութաբանական կայան							■	■	■	■											
10	Արևային կահավանքի տեղադրում								■	■	■	■										
11	Քարեկարգում, կոտակված շինարարի տեղափոխում									■	■											
12	Ավազակալի մեջին ճանապարհի կառուցում											■										
13	Ենթակայանի և դեղակարման շենքի ներքին հարդարում										■	■	■									
14	Ինժեներների տեղադրում և էլեկտրական միացում											■	■	■								
15	Տրանսֆորմատորների էլեկտրական միացում												■	■								
16	35կՎ մազուկային գծի մոնտաժում													■	■							
17	Տեսահսկման համակարգի մոնտաժում														■	■						
18	Օդերևութաբանական կայանի միացում															■	■					
19	Դեղակարման սենյակի կահավորում և համակարգի տեղադրում																■	■	■	■	■	■
20	Կայանի կարգաբերում, գործարկում և ավարտական փուլ																	■	■	■	■	■

						22/02/21-ԸԿ			
						<<ԷԼԵՐՁԻ ԵՍ ՁԻ ԷՅ>> 4,81ՍՎտ դրվանքային հզորությամբ արևային էլեկտրակայան			
						Կաթնադրուր համայնքում			
ՊՈՒ	ՊԵՏԱԿ	ՁԻՄԵ	ՔՈՒՆԱԿ	ՍԵՐՈՎ	ՔՅՈՒ	Շինարարության կազմակերպում	ՓՈՒՄ	ՄԱՐՄ	ՄՆՈՒՅԵՐ
ԸԳՃ	Գ.Կարոյան						Ա	7	
Նախագիծ	Գ.Կարոյան								
Ատրակց	Ղ.Կոչյան					ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՆԱՆԱԿԱՑՈՒՅՑ	«ԱՄԱՆՔ» ՊՆԱԿԱՅԻՆ ՍՊԸ Լիցենզիա ԲՊՆ18814		

Աշխատանքների ընդհանուր տևողությունը կկազմի՝ 21 շաբաթ (147 օր), այդ թվում հողային աշխատանքների՝ 1 շաբաթ:

Հողային աշխատանքների ծավալները.

- Հողակցման աշխատանքներ՝ 713.15 խմ,
- Հիմքերի և խրամուղիների փորում՝ 2420 խմ:
- Ընդամենը՝ 3133.15 խմ:

Հանված գրունտի մեծ մասը օգտագործվում է որպես ետլիցք, իսկ տեղափախման ենթակա է քիչ քանակությամբ 240խմ գրունտ, որը կարճաժամկետ կտեղադրվի շինհրապարակում, որից հետո բեռնատարներով կտեղափախվի համայքի կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ նախապատրաստական աշխատանքները՝

- ժամանակավոր ցանկապատման իրականացում,
- պահեստային և մոնտաժային հարթակների կարգավորում,
- ժամանակավոր տնակների տեղադրում,
- ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում,
- Ջրի պահեստային բաքի տեղադրում,
- Կեղտաջրերի հավաքման ժամանակավոր տարողության տեղադրում
- մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ,
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ,
- անվտանգության նշանների տեղադրում,
- հակահրդեհային միջոցների տեղադրում:

Շինարարության ժամանակ նախատեսվող սարքավորումների ցանկը բերված է աղյուսակ 4. 1-ում:

Աղյուսակ 4. 1. Սարքերի և սարքավորումների ցանկ

<i>N</i>	<i>Անվանումը</i>	<i>Մակնիշը</i>	<i>Քանակը</i>
1	Բուլդոզեր	S - 170	1
2	Հորատող մեքենա	-	1
3	Ցցախվող մեքենա	-	1
4	Բետոնախառնիչ մեքենա	KaMA3 55111	2
5	Ինքնաթափ բեռնատար մեքենա	KaMA3	2

Բետոնային խառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում Թալին քաղաքի բետոնահանգույցից:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներկայացվող արևային կայանի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա կարելի է բաժանել երկու պայմանական մասի.

- ազդեցությունը շինարարական աշխատանքների ընթացքում,
- ազդեցությունը արևային կայանի շահագործման ընթացքում:

Շինարարական աշխատանքներ

Շինարարության փուլում ազդեցությունը պայմանավորված է փոշու արտանետումներով, աղմուկի մակարդակի բարձրացմամբ, շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործմամբ:

Շինարարական աշխատանքում ներգրավված կլինի 41 մարդ, որից

ԻՏԱ – 15 մարդ,

Բանվորներ – 26 մարդ:

Արևային կայանի շահագործող անձնակազմը – 4 մարդ:

Ֆոտովոլտային կայանի կառուցման աշխատանքների նյութատեխնիկական հիմնական մատակարարումը լինելու է մոտակա համայնքների և Երևան քաղաքի մասնագիտացված կետերից: Կառուցման աշխատանքների ժամանակ նախատեսվող հիմնական աշխատանքները կազմված են հողային և տոփանման աշխատանքներից, որից հետո բետոնային ամրացումով կտեղադրվի ֆոտովոլտային պանելի հիմքը և կտեղադրվի պանելը:

Նախատեսվող գործունեության իրականացման համար պահանջվող հիմնական նյութատեխնիկական բազան՝ բետոն (կմատակարարվի մոտակա բետոնահանգույցից), քառանկյուն խողովակներ տարբեր չափսերի, ցեմենտ, թիթեղ, տախտակ, մետաղալար և այլ:

Օդի աղտոտում

Շինարարության ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք առաջանում են շինարարական աշխատանքների ընթացքում և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի այրման արդյունքում:

Հողային աշխատանքներ

Հիմքերի փորման, հողի բեռնման և տեղափոխման ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել նույն՝ ստորև բերված բանաձևով:

$$Q = K1 \times K2 \times K3 \times K4 \times K5 \times K7 \times B \times G \times 10^6 / 3600 \quad (\text{գ/վ}), \text{ որտեղ՝}$$

K1 -ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K2 -ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աերոզոլային մասնիկների, 0.02

K3 -ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 1.0

K4 -ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K5 -ը գործակից է, որը հաշվի է առնում գրունտի խոնավությունը, 0.6 /հաշվի առնելով ջրցանք/

K6 -ը գործակից է, որը հաշվի է առնում գրունտի չափերը, 0.4

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G -ն՝ հողային զանգվածն է 1 ժամում, տ/ժ:

Փորվող հանվող հողի/գրունտի ընդհանուր զանգվածը կազմում է՝ 3133.15 մ^3 , հաշվի առնելով տեսակարար զանգվածը՝ $3133.15 \text{ մ}^3 \times 1.6 = 5301$ տ:

Հողային աշխատանքների տևողությունը՝ 7 օր կամ 7 օր \times 8 ժամ/օր = 56 ժամ:

$G = 5301 \text{ տ} : 56 \text{ ժամ} = 94.7 \text{ տ/ժամ}$:

$$Q = 0.05 \times 0.02 \times 1.0 \times 1.0 \times 0.6 \times 0.4 \times 0.6 \times 94.7 \times 10^6 / 3600 = 3.79 \text{ գ/վրկ}$$

Գումարային փոշու արտանետումները հողային աշխատանքների ժամանակ կկազմեն՝

$$3.79 \text{ գ/վ} \times 56 \text{ ժամ/շին.} \times 3600 \text{ վ} / 10^6 = 0.76 \text{ տ/շին. ժամանակահատված:}$$

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները նվազենելու համար կիրականցվի շինհրապարակի

պարբերաբար ջրցանում, գրունտի խոնավացում, տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափաքի ծածկման պայմաններում:

Աղմուկի և թրթռումների ազդեցություն

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ Օրենսդրական նորմերին:

Աշխատանքների ժամանակ թրթռումների ազդեցությունը կլինի չնչին: Աղմուկի ազդեցությունը պայմանավորված կլինի շինտեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործմամբ:

Օգտագործվող շինարարական տեխնիկական և տրանսպորտային միջոցները ընտրվելու են այն նախապայմանով, որ դրանց տեխնիկական ցուցանիշներում աղմուկի մակարդակը աշխատատեղերում չգերազանցի 80 դԲ-ն: Այս ցուցանիշը թույլ կտա ապահովել աշխատանքային տեղամասերի սանիտարական նորմերը, իսկ հաշվի առնելով հեռավորությունը բնակելի թաղամասերից՝ 0.5 կմ և ավելի, ազդեցությունը բնակավայրերում գործնականում չի զգացվի:

Ջրօգտագործում

Շինարարության ընթացքում ջուրն օգտագործվելու է հրապարակների ջրցանի, փորվող հանվող հողի/գրունտի խոնավացման, ինչպես նաև անձնակազմի խմելու և կենցաղային կարիքների համար: Ջուրը բերվելու Թալինի համայնքային ջրատարից, ջրատար մեքենաներով և պահեստավորվելու է բաքերի մեջ:

ա. Ջրցան

Հողային աշխատանքները նախատեսված են տարվա տաք եղանակին, համապատասխանաբար, անհրաժեշտ կլինի իրականացնել աշխատանքային հրապարակների ջրցան: Շինարարական հրապարակի մակերեսը նախատեսված է 1200 մ²:

Ջրցանի չափաքանակը կազմում է 1.5լ/մ²:

Տաք եղանակի պայմաններում իրականացվում է ջրցան օրական երկու անգամ:

Օրական ջրցանի ջրապահանջը կկազմի՝

$$1200 \text{ մ}^2 \times 2 \times 0.0015 \text{ մ}^3/\text{մ}^2 = 3.6 \text{ մ}^3/\text{օր}:$$

Աշխատանքների ամբողջ ընթացքում ջրապահանջը կկազմի՝

$$147 \text{ օր} \times 3.6 \text{ խմ}/\text{օր} = 529.2 \text{ խմ}:$$

Ջրցանը իրականացվում է չոր եղանակին: Այստեղ կատարվել է ջրապահանջի առավելագույն ծավալների հաշվարկ:

բ. Գրունտի խոնավացում

Փորման աշխատանքների արդյունքում հանվում է ընդհանուր 3313.15 խմ հող/գրունտ: Այդ ընթացքում փոշու արտանետումները կրճատելու նպատակով իրականացվում է հողի և գրունտի խոնավացում:

Խոնավացման համար անհրաժեշտ ջրաքանակը կկազմի.

3313.15 խմ x 8 լ/խմ = 26505 լ կամ 26.5 խմ: Հողային աշխատանքները կատարվելու են 7 օր:

Միջին օրական՝ 26.5 : 7 օր = 3.79 խմ/օր:

Ընդամենը շինարարական աշխատանքների ջրապահանջը կկազմի՝

529.2 + 26.5 = 555.7 խմ:

գ. Խմելու-կենցաղային ջուր

ա. Խմելու ջրապահանջ

Ջրի հաշվարկային ծախսերը որոշվում են համաձայն ՇՆ 2.04.01-25 չափաքանակների:

Օրական, մեկ բանվորին – 25 լիտր

Օրական, մեկ վարչական աշխատողին – 16 լիտր

Հաշվարկների համար աշխատողների առավելագույն թիվը նախատեսված է 35 հոգի, այդ թվում՝ 9 ինժեներատեխնիկական աշխատող (ԻՏԱ) և 26 բանվոր և վարորդ:

Աշխատողների խմելու և կենցաղային պահանջների համար ջրածախսը կազմում է՝
 $W_{խ.տ.} = (n_1 \times N_1 + n_2 \times N_2) \times T$, որտեղ՝

n_1 – ԻՏԱ և վարչական աշխատողների թվաքանակն է՝ 15 մարդ

N_1 – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_2 – բանվորների թվաքանակն է՝ 26 մարդ

N_2 – բանվորների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային տարեկան օրերի թիվն է՝ 147

$W_{խ.տ.} = (9 \times 0.016 + 26 \times 0.025) \times 147 = 116.7$ խմ/շին ժամանակամիջոց, միջին օրական 0.794 մ³:

Շինարարության փուլի կեղտաջրերի հավաքման համար նախատեսվում է առաջնահերթ կարգով տեղադրել անթափանց պատերով ստորգետնյա տարողություն, որի ծավալը՝ 20 խմ, թույլ կտա ապահովել առնվազն 20 օրյա աշխատանք: Հորի

դատարկումը կիրականացվի ամսական երեք անգամ, հատուկ մեքենաներով, որոնք կտեղափոխեն կոյուղաջրերը մոտայկա կոյուղու ցանց:

Ջրահեռացում

Տարածքների ջրցանի և հողերի խոնավացման ջրօգտագործման արդյունքում արտահոսք չի առաջանում:

Խմելու և կենցաղային կեղտաջրեր

$W_{\text{կենց.կոյուղի}} = W_{\text{կենցաղ.}} \times (1 - \Psi)$, որտեղ`

Ψ ` կորուստները, ընդհանրացված 5 տոկոս /0.05/,

$W_{\text{կենց.կոյուղի}} = 116.7 \text{ մ}^3 \times (1 - 0.05) = 110.9 \text{ մ}^3/\text{շինժամ}$, միջին օրական` 0.754 խմ:

Լանդշաֆտ

,Էներջի ԷՍ ՋԻ ԷՅԵ արևային ֆոտոէլեկտրական կայանը (ԱՖԷԿ) նախատեսվում է կառուցել Կաթնաղբյուր համայնքում` 40.347° աշխարհագրական լայնության և 43.922° աշխարհագրական երկայնության կորդինատներով, 1,540մ ծովի մակերևույթից բարձր թեքվածքին:

Շինարարության ընթացքում կկատարվեն տեղանքի հարթեցման աշխատանքներ և արդյունքում տեղի կունենա լանդշաֆտի փոքրածավալ փոփոխություն: Նախապատրաստական աշխատանքների ավարտից հետո, տարածքում կտեղադրվեն արևային մոդուլներ: Լանդշաֆտի փոփոխությունը տեսանելի կլինի Թալին քաղաքից և ավտոճանապարհից, սակայն պատկերների փոփոխությունը էական չի լինի:

Ռեկուլտիվացիայի ենթակա ենթադրյալ* տարածքը իրենից ներկայացնում է արևային կայանի տարածքը և ենթակայանի տարածքը: Հաշվի առնելով այն, որ արևային էներգիայի ստացման մեթոդը բնապահպանական տեսակետից ամենընդունելիներից է ամեն դեպքում պետք է դիտարկել, որ մի օր կարիք կլինի տարածքի ռեկուլտիվացիայի իրականացման: Քանի որ ընդերքի ձևաբանական լուրջ փոփոխություններ չեն նախատեսվում, ուստի ռեկուլտիվացիայի աշխատանքները իրենցից կենթադրեն շին աշխատանքների ընթացքում հավաքված բուսաշերտի փոքր արևային կայանի տարածքով, որից հետո կիրականացվի սիզախոտի ցանում: Արդյունքում հնարավոր կլինի տարածքը օգտագործել որպես արոտավայր:

Էնթադրյալ` քանի որ տարածքը երկարաժամկետ ծառայելու էներգիա ստանալու համար, այս տարբերակը դիտարկվում է որպես քիչ հավանական տարբերակ:*

Կանխատեսվո բուսահող-2300 խմ

Ռեկուլտիվացիայի մակերես 5հա

Փոված բուսաշերտի միջին հաստություն 5սմ

Ռեկուլտիվացիայի համար նախատեսվող գումար 4 500 000 ՀՀ դրամ

Ազդեցությունը կենսաբազմազանության և էկոհամակարգերի վրա

Տնտեսվարողները, որոնց գործողությունների ընթացքում հնարավոր է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքերում գրանցված կենդանատեսակներին կամ բուսատեսակներին, պարտավոր են միջոցներ ձեռնարկել դրանց պահպանության համար: Արգելվում է ցանկացած գործունեություն, որը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության կենդանիների և բույսերի Կարմիր գրքերում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց ապրելավայրերի վատթարացմանը (ՀՀ Կենդանական աշխարհի մասին օրենք, 03.04.2000թ հոդված 18, ՀՀ Բուսական աշխարհի մասին օրենք 23.11.1999 թ հոդված 17):

Ինչպես արդեն նշվել է, տվյալ տարածաշրջանի էկոհամակարգերը ենթարկված են անտրոպոգեն ազդեցության: Ուսումնասիրվող և հարակից տարածքներում բնական էկոհամակարգերը ներկայումս խիստ փոփոխված և դեգրադացված են, իսկ բուն գործունեության տարածքում բուսականությունը գրեթե բացակայում է: Այդ տարածքներում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է, քանի որ ուսումնասիրվող տարածքը գտնվում է հյուսիս-հարաբ ճանապարհին շինարարության հարևանությամբ և շրջապատում առկա են տուֆի հանքեր: Տարածքը գտնվում է ճանապարհի հարևանությամբ, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ:

Նախատեսվող աշխատանքների բնույթով պայմանավորված կարելի է նշել, որ ենթակայանի կառուցման ազդեցությունը չի լինի զգալի: Դրանք պայմանավորված կլինեն՝ հողային աշխատանքների ընթացքում արտանետումների քիչ քանակներով, աղմուկի առաջացմամբ, հողային ռեսուրսների և կենսաբազմազանության վրա առաջացող ազդեցություններով:

Բուսական աշխարհին հնարավոր վնաս կարող է հասցնել տեխնիկական միջոցների երթևեկությունը ճանապարհներից դուրս՝ հատկապես երբ հողային

ծածկույթը խոնավ է: Բուսական աշխարհին մեծապես կարող է վնասել նաև տեխնիկական միջոցների վառելիքաքսուքային (յուղ, դիզել, բենզին և այլն) նյութերի վթարային արտահոսքը:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչները լինելով շարժուն, համեմատաբար պակաս ազդեցության կենթարկվեն:

Տեխնիկական միջոցների աշխատանքի ընթացքում աղմուկի մակարդակի ավելացման պատճառով որոշ տեսակներ հնարավոր է հեռանան այդ տարածքներից, սակայն դա կունենա ժամանակավոր բնույթ և հետագայում իրավիճակը կարող է վերականգնվել:

Ուսումնասիրվող և հարակից տարածքներում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել:

Հաշվի առնելով վերոգրյալը կարելի է փաստել, որ տեղանքի կենսաբազմազանության և էկոհամակարգերի վրա նախատեսվող աշխատանքներով պայմանավորված ազդեցությունը կլինի ոչ էական:

Բուսական և կենդանական աշխարհի հետագա ուսումնասիրությունները նպատակահարմար չէ, քանի որ նախատեսվող գործունեության տարածքում շինարարական աշխատանքները պրոգրեսիվ չեն այլ միանգամյա: Շահագործման փուլում նախատեսվող գործունեության հիմնական տարածքը ծածկված է լինելու արևային պանելներով, իսկ դրանից դուրս որևէ գործունեություն չի իրականացվելու:

Ազդեցությունը հողածածկի վրա

Վեգետացիայի ունակության նվազումը և հողի խտացումը բարձացնում է էրոզիայի վտանգը: Էրոզիան և շինարարության ընթացքում առաջացող փոշու նստվածքը, իրենց հերթին կբերեն օդային ավազանում փոշու աղտոտվածության ավելացում:

Հանվող հողի ծավալը կազմում է 3313.15 մ³, որից 3073.15 մ³ կօգտագործվի ետլիծքի համար, իսկ 240 մ³ կտեղափոխվի Կաթնաղբյուր համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Սակայն պետք է հաշվի առնել, որ տեղանքում գործնականում բացակայում է բերրի հողաշերտը, համապատասխանաբար ազդեցությունը չի լինի:

Թափոններ

Շինարարական աշխատանքների ընթացքում կառաջանա շին աղբ՝ 5.3իսմ ծավալով, որը համաձայն ՀՀ բնապահպանության /ներկայում՝ շրջակա միջավայրի/ նախարարի 25.12.2006թ. N 430-Ն հրամանի համապատասխանում է ,Պատի

բետոնե իրեր, սյուներ, փչացած և աղտոտված բետոնային սալիկներե տեսակին, դասիչ՝ 39901200 01 00 4, վտանգավորության դաս՝ IV:

- կենցաղային աղբ – կառուցապատման փուլում՝ 875 կգ, շահագործման փուլում՝ 2. 160կգ/տ:

Շինարարական աղբը կտեղափոխվի Կաթնաղբյուրի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Մինչ աշխատանքները սկսելը համաձայնություն ձեռք կբերվի համայնքի ղեկավարի հետ շին աղբի տեղափոխման և պահեստավորման համար:

Քանի որ, շինարարական տեխնիկան և ավտոտրանսպորտը կսպասարկվեն Թալին քաղաքի ավտոսպասարկման կայաններում, այլ թափոնատեսակներ արևային կայանի տարածքում չեն առաջանա:

Նախատեսվող գործունեության արդյունքում շինարարական մեծածավալ թափոններ չեն առաջանալու, քանի որ տարածքում իրականացվելու են հարթեցման աշխատանքներ: Կոմունալ կենցաղային թափոնները կուտակվելու են աղմինիստրատիվ շենքին կից նախատեսված աղբամանում, որից հետո համայնքային կոմունալ ծառայությունը կիրականացնի թափոնի տարածքից հեռացում դեպի համայնքային աղբատեղի:

ՀՀ տարածքում վտանգավոր թափոնների պահման, պահեստավորման, տեղափոխման և վերամշակման գործունեությունը լիցենզավորվող գործունեություն է, ուստի ընկերությունը նախատեսում է մինչ թափոնների առաջանալը անձնագրավորել թափոնները, որից հետո կտրամադրվեն լիցենզավորվող կազմակերպությանը: Տարածքում վտանգավոր թափոնների ժամանակավոր պահման վայրում կհավաքվեն առաջացող թափոնները, որից հետո կտրամադրվեն լիցենզավորվող կազմակերպությանը, որը կիրականացնի արդի տեխնոլոգիաները թափոնները վերամշակելու կապ առնվազն նախատեսված պայմաններով պահելու համար: Առաջացող թափոնները միանվագ չեն առաջանալու, այլ խոտանվելու են ժամանակի ընթացքում, ուստի դրանց պահեստավորումը լինելու է փոքր ծավալներով: Խոտանվածները փոխարինվելու են նորերով, խոտանվածները տեղափոխվելու են լիցենզավորված կազմակերպության տարածք: Նախատեսվում է տեղադրել շուրջ 10750 հատ արևային պանել, որի չափերն է 1956*992*40 մմ, հաշվարկները ցույց են տալիս, որ արևային պանելների ընդհանուր ծավալը կլինի 860 մ3 :

Մշակութային հուշարձաններ

Հայաստանը չափազանց հարուստ մշակութային ժառանգություն ունեցող երկիր է, որի ակունքները ձգվում են դեպի հազարամյակների խորքերը: Այստեղ հայտնի են շուրջ 33 000 պատմության և մշակույթի հուշարձաններ, ներկայացված 4500 առանձին համալիրներով, որոնք զբաղեցնում են մոտ 20 000 հեկտար ընդհանուր տարածք: Հայաստանի Հանրապետության տարածքում առկա հուշարձանները պաշտպանված են օրենքով և բաժանվում են տեղական և հանրապետական նշանակության: Դրանց մեջ հատկապես առանձնանում են թվով 80 համալիրներ, որոնք ունեն կարևորագույն պատմական, ճարտարապետական, գիտական, արվեստագիտական և մշակութային բացառիկ արժեք (ընդգրկում են մոտ 400 ճարտարապետական հուշարձաններ): Ոչ վաղ անցյալում դրանք ընդգրկված էին ԽՍՀՄ համամյութենական մշակութային և պատմական արժեք ներկայացնող հուշարձանների ցուցակում: Ներկայումս, ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցուցակը, որը, սկսած 1963 թ. համալրվել է առավելքան 630 պատմական հուշարձաններով և բնության տարածքներով ամբողջ աշխարհում, ներառում է նաև Հայաստանի տարածքի որոշ հուշարձաններ: Դրանց շարքում են Հաղպատի վանական համալիրը, Սանահնի վանական համալիրը և միջնադարյան կամուրջը, Էջմիածինն իր բազմաթիվ հուշարձաններով, Զվարթնոցի տաճարը, Գեղարդավանքի համալիրը և Ազատ գետի վերին հատվածը: Հայաստանի տարածքի այլ հուշարձաններ ևս նախապատրաստվում են ընդգրկվելու ՅՈՒՆԵՍԿՈ-ի ցուցակներում, որոնք են՝ Նորավանքի վանական համալիրը, պարսկական Կապույտ մզկիթը և միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինը: Այդ պատճառով մշակութային ժառանգության գնահատումը և կառավարումը նման ծրագրերի իրականացման տարածքի համար գերակա խնդիր է և պահանջում է հնագետի փորձագիտական եզրակացություն: Հնագիտական փորձագիտության խնդիրներն են.


1. Բացահայտել ծրագրի իրականացման հնարավոր ազդեցությունները նյութական մշակույթի սկզբնաղբյուրների վրա, որոնք են շարժական և անշարժ









հուշարձանները, հնավայրերը, կառուցվածքները և լանդշաֆտները, որոնք ունեն, հնագիտական, հնէաբանական, պատմական, ճարտարապետական, կրոնական, գեղագիտական կամ մշակութային նշանակություն;


2. Պատրաստել շրջակա միջավայրի ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվության հնագիտական բաղկացուցիչը :

Աշխատանքների արդյունքում UNESCO-ի կամ ՀՀ մշակույթի նախարարության կողմից գրանցված որևէ մշակութային ժառանգության կամ հնագիտական տարածք ազդեցության չի ենթարկվում:

Ստորև ներկայացված են ՀՀ Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնքի վարչական տարածքում առակա գրանցված մշակութային հուշարձանները:

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ.	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ	պատկեր
Ամրոց	մ.թ.ա. 3-2 հզ - մ.թ. 1 դ.	0,5 կմ հվ-ան	—	2.57/1	<	Իրինդ տանող ճանապարհի աջ կողմում	
Ամրոց «Չաքարի բերդ»	3-5 դդ.	1,5 կմ հվ-ան	—	2.57/2	<	Աշտարակ-Թավին խճուղու 41-րդ կմ-ի վրա	
Գերեզման Մուշեղ Գալշոյանի	1981 թ.	գ. մ.	—	2.57/3	S	գործող գերեզմանոցում	
Դամբարանադաշտ	մ.թ.ա. 3-2 հզ	հս-ան և հվ-ան մասերում	—	2.57/4	<	Իրինդ տանող ճանապարհի երկու կողմերում, նաև ավազահանքերից ձգվում է մինչև Երևան-Գյումրի մայրուղին	
Եկեղեցի	7 դ.	գ. մ.	—	2.57/5	<	պահպանվել են հիմնասյուսերը	
						Արամայիս	

Կոթող	4-7 դդ.	գ. մ.	—	2.57/6	<	Գաբրիելյանի տնամերձում, պահպանվել է կիսով	
Հուշաղբյուր Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1946 թ.	հս-ան մասում	—	2.57/7	S		
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1975 թ.	գ. մ.	—	2.57/8	S		
Մատուռ	19 դ.	գ. մ.	—	2.57/9	S		
Իսաչքար	7 դ.		—	2.57/9.1	<	հենած հվ պատին	
Իսաչքար	7 դ.		—	2.57/9.2	<	մատուռի ներսում	
Իսաչքար	8-9 դդ.		—	2.57/9.3	<	մատուռի ներսում	
Իսաչքար	12 դ.		—	2.57/9.4	<	մատուռի ներսում	
Կոթող	4-5 դդ.		—	2.57/9.5	<	հենած հս պատին	

							
Կոթող	4-5 դդ.		—	2.57/9.6	<	մատուռի ամ կողմում	
Կոթող	5-6 դդ.		—	2.57/9.7	<	մատուռի ներքում	

Օգտվելով Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնքի և հարակից տարածքի հուշարձանները և դրանց պեղումների ու հետազոտությունների արդյունքները ներկայացնող գրքերից ու հոդվածներից :

Ուսումնասիրելով նախատեսվող գործունեության տարածքը և աղյուսակում ներկայացված հնագիտական արժեքների ցանկը, պարզ է դառնում, որ գործունեության արդյունքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում հաշվառված հուշարձաններից ոչ մեկը անմիջական ազդեցության չեն ենթարկվում և գտնվում են իրացման գոտուց դուրս:

Ամփոփելով ներկայացված տեղեկատվությունը պարզ է դառնում, որ մերձակայքում կան հուշարձաններ որոնք աշխատանքների արդյունքում չեն կրում անմիջական ազդեցություն, ուստի անհրաժեշտ է՝

- տեղում ունենալ այդ միավորների նշումով քարտեզագրական ինֆորմացիա
- պատասխանատուների հետ պարբերաբար անցկացնել վերապատրաստման դասընթացներ
- քանի որ մերձակա տարածքում կան հուշարձաններ անհրաժեշտ է նախատեսվող գործունեության տարածքից դուրս գործունեություն չիրականացնել:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնագիտական արժեքների անխաթարության համար կիրառվելու են պատահական գտածոների ընթացակարգ, որը կիրականացվի ինչպես ընկերության օպերատորների, այնպես էլ հնագետ/մասնագետների միջոցով

Սոցիալական ազդեցությունը

Սոցիալական ազդեցության գործոններն են շինարարական աշխատանքները, նոր աշխատատեղերի ստեղծումը, հողօգտագործում և հողի ձեռքբերում, առողջության և անվտանգության հարցեր, ենթակառուցվածքների վրա հավելյալ լարվածություն, գենդերային ասպեկտներ, տեղական աշխատուժ, ժողովրդագրական խնդիրներ:

Շահագործման փուլ

Արևային Կայանի շահագործման ընթացքում հնարավոր վթարների կամ ենթակայանի հնարավոր վերանորոգման ժամանակ առաջանալու են վտանգավոր թափոններ: ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թ.-ի դեկտեմբերի 25-ի N 430-Ն հրամանի համաձայն հնարավոր թափոններն են.

- Հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղեր (3-րդ դաս՝ 54100207 02 033)՝ 13տ/տարի քանակով: Թափոնի առաջացման հնարավոր քանակը պայմանավորված է տրանսֆորմատորի յուղընդունիչի տարողությամբ:
- Յուղոտված լաթեր (4-րդ 58200600 01 01 4):
- Ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդներ (4-րդ դաս՝ 31401200 01 00 4):
- Յուղերով աղտոտված ավազ (յուղի պարունակությունը 15%-ից ավել (3-րդ դաս՝ 31402303 04 03 3):
- Սև մետաղի ջարդոն (4-րդ դաս՝ 35131100 01 00 4):

Էլեկտրական և մագնիսական դաշտ

Ինչպես միջազգային կայանների հետ կապված, այնպես ՀՀ տարածքում գործող արևային կայանների և 110 կՎ հզորությամբ էլեկտրական գծերի շահագործման արդյունքում որևէ բացասական ազդեցություն չի նկարագրվել:

Կումուլյատիվ /հավաքական/ ազդեցություն

Արևային կայանի կառուցման և հետագա շահագործման ընթացքում վնասակար ազդեցություն կարող են ունենալ՝ շինարարական աշխատանքների աղմուկը, փոշին, ինչպես նաև տեխնիկական միջոցների աշխատանքի ընթացքում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերը և դիզելային վառելիքի, քսայուղերի արտահոսքերը:

Սակայն, ինչպես արդեն նշվել է, տվյալ տարածաշրջանի էկոհամակարգերը ենթարկված են զգալի անտրոպոգեն ազդեցության: Տարածաշրջանում իրականացվող լայնամասշտաբ շինարարական աշխատանքները (հյուսիս-հարավ ճանապարհ) հանգեցրել է նրան, որ նախատեսվող գործունեության տարածքում բնական էկոհամակարգերը ներկայումս խիստ փոփոխված և դեգրադացված են, բուսականությունը գրեթե բացակայում է: Այդ տարածքներում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է, քանի որ տարածքը գտնվում է ճանապարհի հարևանությամբ, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ:

Ուստի նախատեսվող արևային կայանի շինարարությունը, ինչպես նաև շահագործումը, չեն կարող լուրջ ազդեցություն, առավել ևլս հավաքական էֆեկտ ունենալ:

Էլեկտրակայանքների անվտանգ շահագործման կանոնները

Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններե սահմանվել են համաձայն 2006 թվականի նոյեմբերի 23-ի, N 1933-Ն տեխնիկական կանոնակարգի

Սույն պահանջները տարածվում են՝

ա) էլեկտրաէներգետիկայի ոլորտում էլեկտրաէներգիայի արտադրության, հաղորդման, բաշխման գործունեություն իրականացնող կազմակերպությունների վրա,

բ) էլեկտրակայանքները հաստիքային մասնագիտացված անձնակազմի միջոցով շահագործող և (կամ) սպասարկող կազմակերպությունների վրա,

գ) այն կազմակերպությունների վրա, որոնք պայմանագրային հիմունքներով կատարում են շինհավաքակցման, փորձարկման աշխատանքներ՝ սույն կետի ,աե և ,բե ենթակետերում նշված կազմակերպությունների էլեկտրակայանքներում,

դ) էլեկտրասպառող կազմակերպությունների վրա՝ սույն գլխում սահմանված դեպքերում:

2) Յուրաքանչյուր կազմակերպություն իր սեփականությունը հանդիսացող կամ իր կողմից տնօրինվող էլեկտրակայանքների անվտանգությունն այլ անձանց կյանքի ու գույքի համար և էլեկտրակայանքներն սպասարկող աշխատողների, գործող էլեկտրակայանքներում պայմանագրային հիմունքներով աշխատանքներ կատարող աշխատողների առողջությունն ու անվտանգությունն ապահովելու համար պարտավոր է ապահովել հետևյալ պարտադիր միջոցառումների կատարումը՝

ա) կառուցվող (վերակառուցվող) էլեկտրակայանքների գործարկում՝ սույն տեխնիկական կանոնակարգի 3-րդ գլխի պահանջներին համապատասխան,

բ) յուրաքանչյուր աշխատատեղում և աշխատանքային գործընթացում ռիսկերի գնահատում, աշխատողների անվտանգության ապահովման ու առողջական վիճակի անձնագրերի կազմում,

գ) աշխատատեղերում և աշխատանքային գործընթացներում ռիսկերի գնահատում և դրանց ազդեցության նվազեցման վերաբերյալ աշխատողների, կազմակերպության էլեկտրակայանքներում աշխատանքներ կատարելու համար գործուղված անձանց նախնական հրահանգավորում և ուսուցում՝ մինչև ինքնուրույն աշխատանքի թույլատրելը, և պարբերաբար՝ աշխատանքային գործունեության ընթացքում,

դ) գործող էլեկտրակայանքների շահագործման, օպերատիվ և տեխնիկական սպասարկման վերաբերյալ ներքին իրավական ակտերի (կազմակերպության ստանդարտների, շահագործման կանոնների և այլն) մշակում, ընդունում և կատարում՝ էլեկտրակայանքների շահագործման ամբողջ ընթացքում դրանց անվտանգությունն ապահովելու համար,

ե) գործող էլեկտրակայանքների օպերատիվ և տեխնիկական սպասարկման, նորոգման և փորձարկման աշխատանքներ կատարող ստորաբաժանումների կառուցվածքի և գործառույթների սահմանում՝ կազմակերպության ներքին իրավական ակտերով,

զ) էլեկտրատեխնիկական անձնակազմի ուսուցման ծրագրերի, ուսուցման, հրահանգավորման, ատեստավորման, ինքնուրույն աշխատանքի անցնելու թույլատրման, կրկնորդման վերաբերյալ ներքին և անհատական իրավական ակտերի ընդունում,

է) աշխատանքների անվտանգ կատարման վերաբերյալ հրահանգների ու կանոնների կազմում և ընդունում, որոնցում ներառվում են անվտանգության ապահովման տեխնիկական ու կազմակերպական միջոցառումները, պաշտպանության միջոցներից օգտվելու պայմանները, աշխատանքի անվտանգությունն ապահովող յուրաքանչյուր աշխատողի իրավունքները, պարտավորությունները և պատասխանատվությունը,

ը) աշխատանքների անվտանգ կատարման համար աշխատողների ապահովումը համապատասխան գործիքներով, սարքավորումներով, անհատական պաշտպանության միջոցներով, չափիչ և ստուգիչ սարքերով,

թ) անվտանգության կառավարման համակարգի՝ որպես կազմակերպության աշխատանքային գործունեության կարևոր օղակներից մեկի կազմավորումը և աշխատանքի ապահովումը (կազմակերպության անվտանգության ստորաբաժանման կազմավորումն ու աշխատանքի ապահովումը, անվտանգության ապահովման կարճաժամկետ և երկարաժամկետ միջոցառումների մշակումը, ֆինանսավորումը, ներդրումը, անվտանգության վերահսկումը, խախտումների վերլուծությունը և այլն),

ժ) գործող էլեկտրակայանքներում աշխատանքներ կատարող էլեկտրատեխնիկական անձնակազմի աշխատողների՝ գործատուի հաշվին նախնական և պարբերական բժշկական զննումների անցկացումը,

ժա) կազմակերպության կողմից՝ իր տարածքից դուրս գտնվող օդային ու մալուխային զճերի, ենթակայանների, մալուխային էստակադների ու ստորգետնյա կառույցների պարբերական զննումների կազմակերպումն ու անցկացումը՝ այլ անձանց կյանքի ու գույքի անվտանգությունն ապահովելու նպատակով: Կազմակերպությունն այդ էլեկտրակայանքների վտանգների մասին պետք է պարբերաբար տեղյակ պահի հանրությանը՝ զանգվածային լրատվության միջոցներով:

3) Էլեկտրամատակարար կազմակերպության կողմից՝ իր սեփականությունը հանդիսացող էլեկտրական ցանցերից սնվող սպառողներին էլեկտրամատակարարման ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի ԳՕՍՍ 13109 ստանդարտի պահանջներին և հետևյալ չափանիշներին համապատասխան, սակայն չսահմանափակվելով դրանցով՝

ա) լարման մեծությունը՝ դրա թույլատրելի շեղումների սահմաններում,

բ) էլեկտրական ցանցերում առաջացող այն գերլարումների սահմանափակումը՝ մինչև թույլատրելի մակարդակը, որոնք էլեկտրական կամ էլեկտրամագնիսական

կապերի շնորհիվ կարող են անցնել սպառողի էլեկտրական ցանցերը և վնասել սպառողի էլեկտրակայանքները:

4) Էլեկտրամատակարար կազմակերպությունը պետք է ապահովի իր սեփականությունը հանդիսացող էլեկտրական ցանցերին անմիջականորեն միացված՝ սպառողի սեփականությունը հանդիսացող էլեկտրական գծերի պաշտպանությունն էլեկտրական վնասվածքներից՝ համաձայն միացման պայմանագրի:

5) Գործատուն պետք է կազմակերպի աշխատողների ուսուցման կաբինետ, իսկ խոշոր կազմակերպությունների համար (100 աշխատողից ավելի)՝ նաև ուսուցման տեխնիկական բազաներ (պոլիգոններ):

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ոչ մի գործողությունն այլընտրանքային տարբերակ

Ոչ մի գործողությունն այլընտրանքային տարբերակը վերաբերում է այն իրավիճակին, երբ « Էներջի ԷՍ ՋԻ ԷՅԵ և այլ ՖՎ կայանները չեն կառուցվում: Ոչ մի գործողությունն այլընտրանքային տարբերակը կհանգեցնի էլեկտրաէներգիայի առաջարկը գերազանցող պահանջարկին՝ հետագա տարիներին աճող պահանջարկին զուգահեռ առաջացող դեֆիցիտի աճով:

Անվտանգ և հուսալի էլեկտրաէներգիայի արտադրության բացակայությունը՝ զգալի սոցիալական և տնտեսական հետևանքներ ունի, քանի որ հետագայում այն.

- կխոչնդոտի ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովմանը
- կխոչնդոտի ներկայիս և ապագա տնտեսական զարգացումը և ներդրումները՝ էներգառեսուրսների արդյունաբերական պահանջարկը չբավարարելու պատճառով,
- կսահմանափակի սոցիալ-տնտեսական զարգացումը՝ էլեկտրաէներգիայի անբավարար մատակարարման կամ ներքին օգտագործողների, համայնքների և այլ հասարակական կառույցների և հանրային ծառայությունների էներգամատակարարման հուսալիության ցածր մակարդակի և անբավարարության պատճառով,

- կլիտչընդոտի սոցիալական ծառայությունների մատուցումը՝ ներառյալ հանրային առողջությունը և աղքատության վերացումը:

Արդյունքում, ՌՆ մի գործողությունե տարբերակը՝ չի համարվում կենսունակ կամ ընդունելի այլընտրանքային տարբերակ առաջարկվող ծրագրին:

Քննարկվող տարբերակները

Նախատեսվում է, որ պլանավորվող ծրագիրը կհասնի հետևյալ նպատակներին.

- ապահովել էներգամատակարարման ապագա պահանջարկը,
- պահպանել և բարելավել էլեկտրաէներգիայի արտադրության հուսալիությունը,
- ներդնել նոր, էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաներ:

Ելնելով այս նախապայմաններից քննարկվել են տեղի ընտրության տարբերակները և տեխնոլոգիական լուծումները:

Հաշվի առնելով, որ ժամանակակից արևային կայանների տեխնոլոգիական լուծումները ունեն ընդհանուր սկզբունքներ, ընտրությունը կատարվել է գուտ տեխնիկական և ֆինանսական գործոնների վերլուծության հիման վրա:

Տեղի ընտրության ժամանակ, հաշվի է առվել այն հանգամանքը, որ տեղանքում արևային օրերի թիվը բարձր է, ինչպես նաև այն, որ ընտրված հողը չունի ոչ գյուղատնտեսական, որ էլ այլ որևէ լուրջ արժեք:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՇՎԱՐԿ

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների: Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն ՀՀ կառավարության 27.05.2015 N764-Ն որոշման:

Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝

$$ՎՏ = ՀԱԳ + ՋԱԳ + ՕԱԳ ,$$

որտեղ՝

ՎՏ-ն հնարավոր տնտեսական վնասն է դրամային արտահայտությամբ,

ՀԱԳ-ն հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 92-Ն որոշման համաձայն:

ՋԱԳ-ը ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1110-Ն որոշման համաձայն:

ՕԱԳ-ն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 91-Ն որոշման համաձայն:

Էներջի ԷՍ ՋԻ ԷՅԵ արևային էլեկտրակայանի շահագործման ընթացքում շրջակա միջավայրին որևէ վնաս չի հասցվելու և տնտեսական վնաս չի հաշվարկվում:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանում են վնասակարա նյութերի արտանետումներ: Աղտոտված արտահոսքեր չեն առաջանում և հողածածկի աղտոտում կամ աղբոտում նույնպես չի սպասվում, համապատասխանաբար տնտեսական վնաս հաշվարկվում է միայն շինարարական փուլի մթնոլորտային արտանետումների համար:

Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է արտահայտած դրամական համարժեքով:

Տնտեսական վնասը հաշվի է առնում՝

- բնակչության առողջության վատթարացման հետ կապված ծախսերը,

- գյուղատնտեսությանը, անտառային և ձկնային տնտեսություններին հասցված վնասը,
- արդյունաբերությանը հասցված վնասը:

Տնտեսական վնասը հաշվարկվել է համաձայն ՀՀ կառավարության 25.01.2005թ. N 91-Ն որոշմամբ հաստատված “Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ”-ի

Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է 1-ին բանաձևով՝

$$U = \sum_{q} \Phi_{q} \sum_{i} \Psi_{i}, \text{ որտեղ}$$

U -ն ազդեցությունն է, արտահայտված ՀՀ դրամերով,

\sum_{q} -ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված կարգի 9րդ աղյուսակի արտադրական տարածքների համար ընդունվում է 4:

Φ_{q} -ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Սույն կարգի համաձայն $\Phi_{q} = 1000$ դրամ:

Ψ_{i} -ն i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է, չդիֆերենցված փոշու համար՝ 10:

Ψ_{i} -ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է,

Ψ_{i} գործակիցը որոշվում է 2-րդ բանաձևով՝

$$\Psi_{i} = q (3 S_{ui} - 2 U_{\theta} U_{i}), S_{ui} > U_{\theta} U_{i} \quad (2)$$

որտեղ՝

$U_{\theta} U_{i}$ -ն i-րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է՝ տոննաներով:

S_{ui} -ն i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով:

Հաշվի առնելով, որ վնասակար նյութերի արտանետումների շատ փոքր են և կարճաժամկետ, $\Psi_{i} = S_{ui}$

$q = 1$ ՝ անշարժ աղբյուրների համար,

$q = 3$ ՝ շարժական աղբյուրների համար:

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային կոնցենտրացիան պետական ստանդարտով չի սահմանված, ազդեցությունը չի գնահատվում:

$$U = 4 \times 1000 \times 10 \times 0.76 = 30400 \text{ դրամ:}$$

Ընդամենը Էներջի ԷՍ ՋԻ ԷՅԵ արևային էլեկտրակայանի շինարարության արտանետումների տնտեսական վնասը կկազմի՝ 30400 դրամ:

ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՕԴԵՐՆՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻ ԵՎ ՎԹԱՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ

Էներջի ԷՍ ՋԻ ԷՅԵ արևային էլեկտրակայանի շինարարության և շահագործման ընթացքում հնարավոր են վթարային իրավիճակներ, բնական աղետներ և անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ: Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների, բնական աղետների և վթարային իրավիճակների հնարավոր դեպքերում շրջակա միջավայրի լրացուցիչ աղտոտումը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու համար ընկերությունը մշակում է գործուղությունների ծրագիր, որը ներառում է մի շարք համապատասխան միջոցառումներ:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանները նպաստում են գետնամերձ շերտում վնասակար նյութերի կուտակմանը, ցրման գործընթացների դանդաղեցման պատճառով հնարավոր են վնասակար նյութերի կոնցենտրացիաների զգալի բարձրացումներ:

Ընդունված են անբարենպաստ օդերևութաբանական պայմանների 3 կատեգորիաներ, սակայն դրանց հստակ չափորոշիչները բացակայում են և դրանք որոշվում են հետևյալ սկզբունքների հիման վրա՝

- I. Քամու արագության նվազում,
- II. Անհողմություն, չոր եղանակ,
- III. Անհողմություն, թանձր մառախուղ:

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

- ավելացվում են ջրցանի ծավալները.
- կրճատվում է միաժամանակյա աշխատող մեխանիզմների քանակը.
- անհրաժեշտության դեպքում դադարեցվում են շինարարական աշխատանքները:

Արևային էլեկտրակայանի շահագործման անվտանգությունը ապահովելու համար նախատեսված են բազմաթիվ միջոցներ, այդ թվում հողակցում, շանթարգելներ, հակահրդեհային միջոցներ:

Բնական աղետներին պատշաճ դիմակայելու և մեղմացման միջոցառումները ժամանակին իրականացնելու նպատակով նախատեսված է մշակել ,Աղետների և վթարների Կառավարման պլանե, որը կհամաձայնեցվի ՏԻՄ-ի և ԱԻՆ համապատասխան ստորաբաժանման հետ: ,Աղետների և վթարների Կառավարման պլանե-ը պետք է ներառի միջոցառումներ, որոնք առնչվում են հետևյալ խնդիրներին.

- Բնական աղետների կանխատեսում,
- Արտակարգ իրավիճակների պատրաստվածություն,
- Փրկարարական աշխատանքներ և օգնություն աղետների ժամանակ,
- Հետադետային վերականգնում և վերակառուցում:

Բնական աղետների /փոթորիկ, երկաշարժ, հողասահքի վտանգ, անտառային հրդեհներ և այլն/ ժամանակ դադարեցվում են բոլոր աշխատանքները, անձնակազմը տեղափոխվում է անվտանգ վայր: Բնական աղետների նկատմամբ խոցելիության նվազեցման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- Պարբերաբար զննել աղետներին հակազդելու համակարգերի աշխատունակությունը, սանիտարական պաշտպանիչ գոտու և հեղեղատարների մաքրությունը և այլն:
- Ապահովել շինարարական նյութերի, վառելիքի, նավթամթերքի պահեստավորման և բեռնաթափման կանոններին համապատասխանություն,
- Վերապատրաստել աշխատակիցներին՝ արտակարգ իրավիճակներում գործելու նպատակով,
- Հաստատել հուսալի կապ համապատասխան տարածքային իշխանությունների, առաջին օգնության ծառայության, փրկարարական ծառայության, ոստիկանության, հրշեջ ծառայության, ինչպես նաև էլեկտրաէներգիայի, գազի և ջրի ծառայությունների միջև՝ արտակարգ իրավիճակներում պատշաճ արձագանք ստանալու նպատակով:

Առավել հաճախակի հանդիպող վթարային իրավիճակներից է հրդեհների ծագումը: Հրդեհավտանգ են համարվում հեղուկ վառելանյութի և այլ դյուրավառ նյութերի պահեստները, գազատարները, կաթսայատները, **էլեկտրական ենթակայանները, էլեկտրական բաշխիչ վահանակները:** Շինարարության և էլեկտրակայանի շահագործման ժամանակ բոլոր հրդեհավտանգ հանգույցները պետք է համալրված լինեն հակահրդեհային ավտոմատ սարքավորումներով: Բոլոր այն տեղամասերը, որոնք չունեն ավտոմատ հակահրդեհային սարքավորումներ, պետք է ունենան ձեռքի կրակմարիչներ:

Անհրաժեշտ է նշանակել պատասխանատու, որի պարտավորությունների մեջ կմտնի հակահրդեհային միջոցառումների կիրառումը:

Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը

Նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ.

Շինարարության փուլ

Օդային ավազան.

Գործունեության իրականացման հետևանքով օդային ավազան հնարավոր արտանետումները լինելու են ավտոտրանսպորտի շահագործումից՝ ծխագազերի տեսքով, ինչպես նաև հողային աշխատանքների(փորման, բեռնման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով:

Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կատարվելու է գրունտի խոնավեցում, անհրաժեշտության դեպքում՝ ճանապարհների ջրցան: Ջրցանը կատարվելու է ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին,

- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,

- տարածքում նյութերը պահվելու են ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ,

- շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:

Հողային ռեսուրսներ.

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում էրևան-Գյումրի ավտոճանապարհի հարևանությամբ: Համաձայն տարածքում իրականացված հորատումների, տարածքում հողաբուսաշերտը բացակայում է, առկա են որոշ քարաթփային երևակումներ, իսկ հիմնական տարածքն աչքի է ընկնում տուֆի բնական մերկացմամբ և հողաբուսաշերտի բացակայությամբ, հարևանությամբ գտնվում են մի քանի տուֆի հանքեր: Հողի բերրի շերտը բացակայում է համապատասխանաբար ազդեցությունը չի ակնկալվում:

Շինարարական աշխատանքերի ավարտից հետո տարածքում նախատեսվում են կանաչապատման և բարեկարգման աշխատանքեր: Համաձայն նախագծման թույլտվության տարածքի 20%` 9500 քմ տարածք կկանաչապատվի: Տարածքում նախատեսվում է սիզամարգ, թփեր:

Նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք մոտ 950 խմ, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան` նախապես համաձայնեցվելով Կաթնաղբյուրի համայնքապատարանի հետ: Ոռոգումը կիրականացվի բնական առանց ոռոգման համակարգի:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում Երևան-Գյումրի ավտոճանապարհի հարևանությամբ: Համաձայն տարածքում իրականացված հորատումների, տարածքում հողաբուսաշերտը բացակայում է, առկա են որոշ քարաթփային երևակումներ, իսկ հիմնական տարածքն աչքի է ընկնում տուֆի բնական մերկացմամբ և հողաբուսաշերտի բացակայությամբ և պատահական չէ, որ հարևանությամբ գտնվում են մի քանի տուֆի հանքեր: Ամեն դեպքում ընկերությունը կիրականացնի բոլոր հնարավորը որպեսզի առկա հնարավոր հանաքված հողաբուսաշերտը հավաքվի և պահվի առանձին վայրում: Ընկերությունը ըստ նախագծի այս պահին չի կարող նախանշել պահման հիմնական վայրը, բայց ամեն դեպքում դա կլինի ընկերության պատկանող այնպիսի վայր, որ հեռու լինի սելավային հոսքերից և ցրման ռիսկ չլինի: Բուսաշերտի կուտակումից հետո, դրա ամբողջ մակերեսով կտնկվի սիզախոտ, որպեսզի բացառվի ինվազիվ տեսակներով պայմանավորված հողի դեգրադացիա:

Լավատեսական կանխատեսումներով հողային աշխատանքների ամբողջ ծավալը կկազմի 2 300 խմ`

Հողակցման աշխատանքներ` 500 խմ,

Հիմքերի և խրամուղիների փորում` 1800 խմ:

Ընդամենը` 2300 խմ:

Ջրային ռեսուրսներ.

Շինարարության փուլում տեխնիկական ջրի(ջրցան) պահանջը կբավարարվի ջրցան մեքենաների միջոցով, իսկ խմելու ջուրը կմատակարարվի տարաներով(շշերով)՝ ըստ պահանջի:

- ճանապարհների ջրցանն իրականացվելու է տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության,

- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ մասնագիտացված մեքենաներով,

- շինարարության փուլում աշխատողները կօգտվեն հարակից տարածքում գործող արևային կայանի գոյություն ունեցող սեպտիկ հորից:

Կենսաբազմազանություն

Գործունեության ենթակա տարածքում կենսաբազմազանության հայտնաբերման և դրանց պահպանման անհրաժեշտությունից ելնելով նախատեսվում է.

- մշակվելու է գործողությունների պլան, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. ,ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին N781-Ն որոշման պահանջներից,

- ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում՝ ընկերությունը նախօրոք առանձնացնելու է հատուկ պահպանման գոտի՝ վերջիններիս տեղափոխելու և վերատնկելու համար:

Թափոններ

Շինարարության փուլում առաջանալու են թափոններ, որոնց հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսներ մեղմելու նպատակով նախատեսվում է.

- վտանգավոր նյութերը և մետաղական թափոնները կփոխանցվեն համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին՝ դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար,

- շինարարական թափոնները՝ մոտ 409 կգ՝ բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն կտեղափոխվեն և կտեղադրվեն համայնքի կողմից հատկացված վայրում, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,

- շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնվելու են թափոնների ջերմային վնասագերծում կատարող կազմակերպություններին կամ կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերակցությամբ խառնվելու են և տեղափոխվելու են աղբավայր:

Աղմուկ և թրթռում

Շինարարության ընթացքում աղմուկը և թրթռումները կապված են լինելու շինարարական տեխնիկայի աշխատանքի հետ, որի համար նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,

- տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկական օգտագործվելու են սարքին վիճակում՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով,

- պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տեխնիկական միջոցները, տրանսպորտային միջոցների շարժիչները:

Արտակարգ իրավիճակներ.

Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվելու են.

- նախատեսվող գործունեության վայրն ապահովելու է հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով և շանթարգելներով,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են,

- հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

Աշխատանքի կազմակերպում և աշխատանքի անվտանգություն.

Աշխատողների աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով,

- աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական հագուստ, շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու են 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան,

- աշխատողների համար հատկացվելու են ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար(տնակ),

- պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի ,Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի N 2. 2. 80 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու են հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ,

- վերահսկվելու է աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները,

- նվազագույնի են հասցվելու ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,
 - պահպանվելու է աշխատողների միջև սոցիալական հեռավորությունը, պարտադրվելու է դիմակների կրումը:
- Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը և հեռավորությունը բնակավայրերից, ազդեցությունները կլինեն շատ ցածր:

Բարեկարգում

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.

- շինարարական սարքավորումները ապամոնտաժվելու են,
- շինարարական հրապարակները մաքրվելու են, վերականգնվելու է լանդշաֆտը:

Շահագործման փուլ

Շահագործման փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կապված են լինելու կայանի անվտանգ շահագործման, ջրային ռեսուրսների օգտագործման, հողային ռեսուրսների հնարավոր էրոզիայի և աղտոտման, ինչպես նաև թափոնների առաջացման հետ: Գործունեության տարածքն արդեն ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների, քանի որ կայանից մոտ 200 հեռավորության վրա գործում են այլ արևային կայաններ: Տարածքն օգտագործվել է որպես արոտավայր, հողային ծածկույթն արդեն իսկ ենթարկվել էրոզիայի: Հնարավոր ազդեցությունների մեղման կամ կանխարգելման նպատակով նախատեսվում է միջոցառումների իրականացում.

- մշտական մոնիթորինգ, հերթափոխային գրաֆիկով՝ մեկ աշխատողի միջոցով,
- մշտական գործելու է պահակակետ, որտեղ տեղադրվելու են հեռուստացույց, մոնիտոր՝ անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու համար:

Ջրային ռեսուրսներ.

- աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով,
- աշխատողների կենցաղային և սանիտարական կարիքները հոգալու են հարակից տարածքում գոյություն ունեցող սանիտարական հանգույցից(սեպտիկ հոր),

Հողային ռեսուրսներ.

- ընկերության կողմից հնարավորինս կպահպանվեն գործունեության վայրում՝ ազատ տարածքում խոտածածկ հատվածները,
- կկատարվեն բազմամյա խոտաբույսերով ծածկում (ցանքս),

- հողի խոնավացման նպատակով՝ ջրցանման աշխատանքներ, որի համար ջուրը տարածք կտեղափոխվի ջրցան մեքենայով՝ պայմանագրային հիմունքներով:

Թափոններ

Շահագործման փուլում հնարավոր է թափոնների առաջացում, որոնց ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար նախատեսվում է.

- Հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղեր հավաքվելու է համապատասխան տարրաների մեջ և հանձնվելու է մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով:
- Հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառվելու են spill kit կոչված ներծծիչ կտորները, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը,
- Յուղոտված լաթեր խառնվելու է կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերությամբ և տեղադրվելու է քաղաքային աղբավայրում կամ հանձնվելու է վերամշակող կազմակերպություններին:
- Ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդները հանձնվելու է ասֆալտապատող ընկերություններին:
- յուղերով աղտոտված ավազը հանձնվելու է մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով:
- Սև մետաղի ջարդոնը հանձնվելու է մասնագիտացված կազմակերպություններին:

Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն

Ենթակայանի և օդային գծի անվտանգության գոտու ապահովումը նախատեսված է ՀՀ կառավարության N 363-Ն 02. 04. 2009թ. որոշման պահանջների համաձայն: Տեղադրվելու է.

- ինվենտորների մեջ ներկառուցված հատուկ WiFi swich-եր,
- տեսահսկման համակարգ, 35 հատ տեսախցիկ՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ:

Կայանն ապահովված է լինելու հրդեհաշիջման միջոցներով.

- ենթակայանի տարածքում՝ հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչներ, իսկ արևային կայանում՝ կրակմարիչներ,
- առաջին բուժօգնության անհրաժեշտության դեղարկղիկով:

Շահագործման փուլում ընդգրկվելու են 6 աշխատող, որոնք աշխատելու են հերթափոխով:

Կարողությունների զարգացում

Արևային կայանի աշխատանքների անվտանգությունը և հուսալիությունը ապահովելու նպատակով, այն պետք է համալրված լինի բարձրորակ և փորձառու մասնագետներով: Նման մասնագետներ հնարավոր է վարձել երկար տարիների փորձ

ունեցող նմանատիպ ընկերություններից, հնարավոր է նաև նշված ընկերություններում կազմակերպել մասնագետների վերապատրաստման դասընթացներ: Նշված մասնագետներով համալրումը կապահովի կայանի անվտանգ և անխափան աշխատանքը, հնարավորություն կտա մոնիտորինգի պատշաճ իրականացում:

Համապատասխան մասնագետները հետևելու են բնապահպանական կառավարման և մոնիտորինգի պլաններով նախատեսված միջոցառումների ժամանակին և պարտադիր իրականացմանը:

Փակման փուլ

Շահագործման ժամկետի ավարտից հետո ընկերությունը հետագա հնարավորությունների բացակայության պայմաններում կատարելու է կայանի սարքավորումների ապամոնտաժում և տարածքի նախկին տեսքի բերում: Գործողությունները կատարվելու է համայնքի վերահսկողությամբ:

Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև աշխարհի զարգացած երկրներում, դեռևս գոյություն չունի արևային կայանների սարքավորումների, մասնավորապես ֆոտոէլեմենտներ պարունակող պանելների և այլ ուղեկցող մասերի՝ որպես թափոնատեսակի, լուծումները:

Քանի որ արևային կայանի պանելները (батаре́йка) պատրաստվում են տարբեր ֆոտոէլեմենտներ պարունակող (ապակի, պլաստիկ) նյութերից, որոնք իրենց մեջ պարունակում են (կապար, քրոմ, կադմիում, սիլիցիում և այլ), ուստի դրանց ուտիլիզացիան և վերամշակումը հանդիսանում են հրատապ լուծում պահանջող խնդիր: ՀՀ կառավարության կողմից անհրաժեշտություն կա մշակելու արևային կայանի գործարկման ժամկետը լրացած և գործածությունից դուրս եկած՝ արևային թափոնների՝ պանելների, ֆոտոէլեմենտներ պարունակող արևային սնուցիչների վերամշակման ծրագիր, նաև համապատասխան օրենքի ընդունում, հաշվի առնելով առաջավոր զարգացած երկրների փորձը:

Մինչև համապատասխան ռազմավարության մշակումը ընկերությունը նախատեսում է կիրառել հետևյալ հնարավոր տարբերակները.

- հնարավորության դեպքում վերանորոգել և կրկնակի օգտագործել վթարված մասերը,
- ֆոտոէլեմենտներ պարունակող պանելները չթաղել կամ չհավաքել աղբավայրերում, բաց վիճակում,
- վաճառել թափոնների հավաքմամբ զբաղվող այլ կազմակերպությունների՝ ներառյալ արտասահմանյան զարգացած երկրների, որոնք ունեն նման ժամկետանց արևային թափոնների վերամշակման տեխնոլոգիաներ,
- ֆոտոէլեմենտներ պարունակող թափոնները հանձնել էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումներ հավաքող կետերին կամ կազմակերպություններին/նաև արտասահմանյան/ կազմակերպված թափոնների հավաքագրման նպատակով,

- թափոնները հանձնել այն երկրների կազմակերպություններին, որոնք զբաղված են արևային պանելների արտադրությամբ և որոնցից ձեռք են բերվել ֆոտոէլեկտրոնային արևային պանելները:

Գործունեության իրականացման ներդրման արժեքը կազմում է 3,3 մլն ամերիկայն դոլլար: Ներդրման արժեքի մեջ մտնում են կայանի կառուցման շինարարական և շահագործման և փակման փուլերում կատարվող, ինչպես նաև շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված բոլոր ծախսերը:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ /ԲԿՊ/

Նախատեսվող գործունեության շինարարությաննը և շահագործմանը ներկայացվող հիմնական պահանջների թվում է ապահովել մարդկանց առողջության համար բարենպաստ պայմաններ և շրջակա միջավայրի որակի նորմատիվային պահանջները: Դրանք են.

- Պահպանել մթնոլորտային օդը, մակերևույթային և ստորերկրյա ջրերը, հողն ու ընդերքն աղտոտող վնասակար նյութերի առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաների սահմանները.
- Չգերազանցել վնասակար նյութերի սահմանային թույլատրելի խտությունները արտանետումներում և արտահոսքերում.
- Չգերազանցել աղմուկի, վիբրացիայի, էլեկտրամագնիսականության, ռադիացիոն ճառագայթման և այլ ֆիզիկական ազդեցությունների սահմանային թույլատրելի մակարդակները.
- Պահպանել հողերի գոտևորման ռեժիմները, քաղաքաշինական կանոնները, գյուղատնտեսական հողերի պահպանության կանոնները, սանիտարական պաշտպանիչ գոտիների սահմանված չափերը.
- Բարելավել բնակչության և նրա առանձին խմբերի սոցիալական, առողջական վիճակը բնորոշող ցուցանիշերը:

Այս նորմատիվները պահպանելու դեպքում համարվում է, որ նախատեսվող գործունեությունը չի խախտում բնական հավասարակշռությունը: Դրան հասնելու համար նախաձեռնողը ներկայացնում է բնապահպանական և սոցիալական մեղմման միջոցառումների պլան: Բնապահպանական և սոցիալական մեղմման միջոցառումները, պատասխանու կատարողներով, անհրաժեշտ ծախսերով բերված են սույն հաշվետվության բնապահպանական կառավարման պլանում /ԲԿՊ/:

“ Էներջի ԷՍ ՋԻ ԷՅ ” արևային էլեկտրակայանի շինարարության և շահագործման բնապահպանական կառավարման պլան

Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Ծախսերը, հազ.դրամ	Պատասխանատվությունը	
				Կատարող	Վերահսկող
<i>Նախապատրաստական փուլ</i>					
Ելակետային վիճակի ուսումնասիրություն	Զրոյական ազդեցություն	1/ Մերձակա տարածքների մթնոլորտային օդի որակի պարզում 2/ Հայցվող տարածքից ցածր նիշերում մակերևույթային ջրերի որակի պարզում 3/ Շինարարության տեղանքի և շրջակայքի բուսական և կենդանական աշխարհի ուսումնասիրություն 4/ Շինարարության տեղամասերի հողաձածկի ուսումնասիրություն, 5/ Շինարարության տարածքում պատմամշակութային և բնական հուշարձանների առկայության ստուգում	500. 0	Էներջի ԷՍ ՋԻ ԷՅԵ ՍՊԸ կամ կապալառու կազմակերպություն	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին
<i>Շինարարության փուլ</i>					
Լ. Արևային էլեկտրակայանի	1. Մթնոլորտային օդի վրա ազդեցություն ա/փոշու արտանետում	ա/ Աշխատանքները կատարել հնարավորինս խոնավ եղանակներին: Չոր եղանակներին ջրել աշխատանքային հրապարակները:	Կապիտալ ծախսերի շրջանակում	Էներջի ԷՍ ՋԻ ԷՅԵ ՍՊԸ և կապալառու	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին

<i>Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի</i>	<i>Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները</i>	<i>Առաջարկվող մեղմացնող միջոցառումները</i>	<i>Ծախսեր Ը, հազ.դրամ</i>	<i>Պատասխանատվությունը</i>	
				<i>Կատարող</i>	<i>Վերահսկող</i>
<p>շինարարություն</p>	<p>բ/ դիզ. շարժիչների ծխագազերի վնասակար նյութերի արտանտումեր</p> <p>գ/ աղմուկ</p> <p>2.Հողային ռեսուրսների վրա ազդեցություն</p> <p>ա/ դիզ. վառելիքի և յուղերի արտահոսքից</p>	<p>բ/ Տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակում, ենթարկվեն պլանային տեխնիկական ստուգումների: Դիզելային շարժիչները ցանկալի է ունենան վնասակար նյութերի կլանիչներ;</p> <p>գ/ Տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակում, ունենան սարքին իլացուցիչներ: Աղմկոտ աշխատանքները կատարվում են ցերեկային ժամերին:</p> <p>ա/ Տեխնիկատրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակում՝ բացառելու համար վառելիքի և յուղերի պատահական արտահոսքը և ենթարկվեն պլանային տեխնիկական ստուգումների: Տեխնիկատրանսպորտային միջոցների սպասարկումը և լիցքավորումը կատարել Թալին քաղաի մասնագիտացված կայաններում</p>		կազմակերպություններ	

<i>Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի</i>	<i>Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները</i>	<i>Առաջարկվող մեղմացնող միջոցառումները</i>	<i>Ծախսեր Ը, հազ.դրամ</i>	<i>Պատասխանատվությունը</i>	
				<i>Կատարող</i>	<i>Վերահսկող</i>
<p>բ/ Հողերի խախտում</p> <p>3. Մակերևույթային ջրերի վրա ազդեցություն ա/ ջրերի աղտոտում</p> <p>4. Կենսաբազմազանության վրա ազդեցություն</p>	<p>բ/ Առավելագույն չափով օգտագործել գոյություն ունեցող ճանապարհները: Արգելվում է երթևեկել ճանապարհներից դուրս:</p> <p>ա/ Եթե ճանապարհը հատում է մակերևույթային ջրերի հոսքեր /առուներ, աղբյուրների հոսքեր/, ապա վերջիններս խողովակներով անցկացվում են ճանապարհի պաստառի տակով: Շինարարության ընթացքում իրականացնեն նախագծային փաստաթղթերով նախատեսված ջրահեռացման կառույցները:</p> <p>Մասնագետ-կենսաբանը մինչև աշխատանքների սկսելը հետազոտում է շինարարության տարածքը և առաջարկում է կենսաբազմազանության պաշտպանության միջոցառումներ, այդ թվում.</p> <ul style="list-style-type: none"> - Արգելել տրանսպորտային միջոցների երթևեկումը դաշտային տարածքներում, 	<p>300. 0</p>			

<i>Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի</i>	<i>Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները</i>	<i>Առաջարկվող մեղմացնող միջոցառումները</i>	<i>Ծախսերը, հազ.դրամ</i>	<i>Պատասխանատվությունը</i>	
				<i>Կատարող</i>	<i>Վերահսկող</i>
		<ul style="list-style-type: none"> - Քարակույտերի տեղափոխումը իրականացնել փուլերով՝ հնարավորություն տալով սողուններին հեռանալ տարածքից անվնաս, - Բացառել միաժամանակ մի քանի շինարարական տեխնիկական միջոցների աշխատանքը մեկ տեղամասում, - Շինարարական աշխատանքների ժամանակավոր հրապարակները կազմակերպել բուսածածկ չունեցող մասերում: 			
<i>Շահագործման փուլ</i>					
1. ,Թալին-2Ե արևային էլեկտրակայանի շահագործում	Սոցիալական միջավայր, մարդկանց առողջության և անվտանգության խնդիրներ	ա/Աշխատակազմը պետք է ունենա խմելու ջրի և զուգարանների հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ: Աշխատատեղերում հասանելի վայրում պետք է լինեն առաջին օգնության բժշկական արկղիկները, և հակահրդեհային միջոցները: Աշխատակազմը պետք է ապահովվի համազգեստով և անձնական	Ընթացիկ ծախսեր	,Էներջի ԷՍ ՋԻ ԷՅԵ ՍՊԸ	ԱԻՆ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին

<i>Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի</i>	<i>Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները</i>	<i>Առաջարկվող մեղմացնող միջոցառումները</i>	<i>Ծախսերը, հազ.դրամ</i>	<i>Պատասխանատվությունը</i>	
				<i>Կատարող</i>	<i>Վերահսկող</i>
		անվտանգության անհրաժեշտ միջոցներով: Անվտանգության սարքավորումների օգտագործումը պետք է ուսուցանվի, վերահսկվի և պարտադրվի: Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը պետք է նախատեսի հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում: ք/ Մշակել արտակարգ և վթարային իրավիճակների պլան, հրահանգավորել բոլոր աշխատակիցներին: գ/Կանոնավոր կատարել սոցիալական պարտավորությունները համաձայն համայնքի հետ կնքած պայմանագրի: Կանոնավոր հանդիպել համայնքի ղեկավարության հետ փոխադարձ հետաքրքրության խնդիրները քննարկելու համար:			

Ընդամենը բնապահպանական ծախսերը կկազմեն՝ 800. 0 հազար դրամ

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

Շրջակա միջավայրի մշտադիտարկումը /*Էկոլոգիական մոնիթորինգը*/ շրջակա միջավայրի բաղադրիչների, բնական էկոլոգիական համակարգերի, նրանցում ընթացող գործընթացների, դրական և բացասական տեղաշարժերի համալիր դիտարկում է, որը թույլ է տալիս գնահատել և կանխատեսնել շրջակա միջավայրի իրավիճակի փոփոխությունները: Էկոլոգիական մշտադիտարկման նպատակներն են. շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և նորմավորումը, ազդեցության աղբյուրների վերահսկումը /արտանետումները, ֆիզիկական ազդեցությունը, մնացորդային ազդեցությունը, վտանգները/, շրջակա միջավայրի բաղադրիչների որակի վերահսկողությունը: Այս ամենը անհրաժեշտ է ազդակիր համայնքների բնակչության անվտանգության և առողջության, աղետների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման, ռացիոնալ բնօգտագործում և բնապահպանությունն ապահովելու համար:

Մշտադիտարկման պլանը մաս է կազմում բնապահպանական կառավարման պլանի /ԲԿՊ/ և հատակեցնում է շրջակա միջավայրի վրա նախաձեռնության ազդեցության մեղմացման միջոցառումների վերահսկման գործողությունները նախաձեռնության գործունեության բոլոր /ելակետային, շինարարության, շահագործման և փակման/ փուլերում: Մշտադիտարկումը իրականացվում է շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների նկատմամբ՝ մակերևութային և ստորգետնյա ջրեր, մթնոլորտային օդ, հողեր, կենսաբազմազանություն, սոցիալական միջավայր, հանքարդյունահանման համալիրի կառույցներ /պոչամբար, լցակույտեր, բացհանքեր/, կենսաբանական մաքրման կայաններ և այլն:

.Էներջի ԷՍ ՋԻ ԷՅԵ ՍՊԸ արևային կայանի շինարարության ժամանակ նախատեսում է իրականացնել մոնիթորինգի հետևյալ միջոցառումները.

- Շաբաթական պարբերությամբ իրականացնել շինհրապարակի հողածածկի արտաքին զննում
- Հետևել շինհրապարակի օդի փոշոտվածությանը՝ արտաքին
- Ամսական պարբերականությամբ իրականացնել շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտի շարժիչների ստուգում
- Շաբաթական պարբերությամբ ստուգել սորուն շինանյութերի պահեստների հատակների վիճակը:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով	200000	200000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;	5x35000	175000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ ամիսը մեկ հաճախականությամբ:	5x25000	125000
Ամբողջ շինարարության համար		500000

Արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը շինարարական աշխատանքների ընթացքում:

- Նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը, շինարարության նախաձեռնողը կկիրարկի Արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և արձագանքման պլանը՝ շինարարական ողջ ժամանակահատվածի համար:

- Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- հրդեհի առաջացումը

- հեղուկ նյութերի արտահոսքը

- աշխատողների վնասվածքները

- շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար իրականացվելու են հետևյալ միջոցառումները՝

- նախքան աշխատանքների սկիզբը, բոլոր աշխատողները՝ այդ թվում նաև վարորդները, պետք է անցնեն հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումն իրականացնում է աշխատանքների ղեկավարը:

- նախքան աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները պետք է հագեցվեն հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնեն դրանց ճիշտ օգտագործման, ինչպես նաև առաջին բուժ. օգնության ցուցաբերման վերաբերյալ հրահանգավորում:

- հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին ցուցաբերել առաջին բուժ. օգնության, ապա անհրաժեշտության դեպքում տեղափոխել քաղաքի մոտակա բժշկական հաստատություն:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

Որպես արտակարգ իրավիճակների կանխարգելման և կառավարման միջոցառումներ կիրականացվեն նաև հետևյալ միջոցառումները՝

1. Շինարարական աշխատանքների տեղամասերում կտեղադրվեն հրդեհաշիջման սկզբնական միջոցներ,
2. կփակցվեն հակահրդեհային անվտանգության պաստառներ,
3. կտեղադրվեն հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

Կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունների համար առաջարկվող մեղմացնող միջոցառումները ներառում են.

- Նախքան հորատահարթակների և ճանապարհների կառուցումը, հետախուզափորվածքների անցկացումը, ընտրված տեղամասերի հետազոտում բուսաբանների և կենդանաբանների կողմից՝ հայտնաբերելու համար ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերն ու կենդանիները, նրանց աճելավայրերը, բներն ու որջերը:
- Հայտնաբերման դեպքում նախատեսվող աշխատանքների տեղամասերը տեղափոխում՝ բացառելու համար ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերի ու կենդանիների վրա բացասական ազդեցությունը:
- Նախատեսվող հորատահրապարակներում և ճանապարհներում թփերի առկայության դեպքում դրանց դիրքի տեղաշարժում (թույլատրելի սահմաններում), հակառակ դեպքում դրանց վերատնկում համապատասխան մարմնի հետ համաձայնեցված:
- Աշխատանքների ընթացքում բացառել տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից դուրս, հատկապես երբ խոտածածկը թաց է:
- Հնարավորինս արագ վերակազմել խախտված հողաբուսաշերտը:
- Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առանձնացնել տվյալ պահպանվող գոտին:
- Կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնադրման և թխաման ժամանակամիջոցում դադարեցնել տեխնիկական միջոցների կիրառմամբ աշխատանքները:
- Ամբողջ աշխատանքների ընթացքում հնարավորինս նվազեցնել աղմուկն ու լուսավորությունը:
- Անհարժեշտության դեպքում մշակել գործողությունների պլան հիմնվելով ՀՀ կառավարության "ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին" թիվ 781-Ն որաշման դրույթների վրա:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեության հիմնական աշխատանքները կատարվելու են բաց դաշտային պայմաններում, ուստի պլանավորվում է կիրառել արտակարգ իրավիճակների կառավարման հետևյալ պլանային միջոցառումները, աշխատանքների ամբողջ ընթացքում:

Ի՞նչ անել փլատակներում գտնվելիս.

- չկորցնել ինքնատիրապետումը, պատրաստ լինել դժվարություններին. կատարյալ մթությանը, ճնշմանը, սննդի և ջրի բացակայությանը, հնարավոր վնասվածքների պայմաններին (հուսահատության մատնվող մարդը դատապարտված է), - զգուշորեն ազատել ձեռքերը և ոտքերը, չփորձել այդ ընթացքում դուրս հանել, ճոճել խանգարող քարերը, աղյուսները, փայտե կամ այլ կառուցվածքները: Մեղմված ձեռքերը կամ ոտքերը պետք է ազատել միայն ներքևից փորելով: Ազատվելուց հետո վնասվածքները հայտնաբերելու համար ուշադիր զննել մարմինը, - եթե հնարավորություն կա բացել սողանցք և ինքնուրույն դուրս գալ փլատակից՝ խուսափելով իրար վրա կուտակված մեծ բեկորներից, քանի որ դրանք կարող են նոր փլուզման պատճառ դառնալ: Սողանցքն անպայման ամրացնել հենարաններով, որի համար կարող եք օգտագործել ձեռքի տակ եղած փայտե և մետաղյա առարկաներ, քարի և բետոնի պինդ բեկորներ, - եթե դուրս գալ հնարավոր չէ, ապա փորձել տեղափոխվել ավելի անվտանգ տեղ, պառկել կողքի, ոտքերը ծալել և մոտեցնել դեպի կուրծքը, իսկ ձեռքը դնել իրանի տակ կամ նստել երեսնիվայր առավելագույնս կռանալով, հենվելով ծնկների ու արմունկների վրա: Այս դիրքն ապահովում է նվազագույն շփում սառը գետնի հետ, - ավելորդ շարժումներ չանել՝ էներգիա խնայելու համար, - փնտրել հագուստ, վերմակ, շորեր, պոլիէթիլենի կտորներ, որոնք կարող են օգտագործվել որպես վերմակ, - աշխատել գտնել որևէ հեղուկ, եթե մոտակայքում հողը թաց է, ապա հագուստից մի կտոր պոկել և դրանով ներծծել ջուրը, կամ 13 բերանում փոքր և ողորկ քար պահել, որը կմեղմացնի ծարավի զգացումը, - անթույլատրելի է կրակ վառելը, - ճշտել օդի ներթափանցման ուղին, - աշխատել ազդանշան տալ ձայնով, առարկաներին հարվածելով, հատկապես, երբ լսում եք մարդկանց ձայն կամ շան հաչոց, - ձայները

լռելու դեպքում հասկացեք, որ հայտարարվել է լռության ըուպե և իրականացվում է ուժեղացված հետախուզություն, - հիշել, որ ձեզ կարող են հայտնաբերել ձեր ձայնով, տնքոցով, շնչառությամբ, մարմնի շերմությամբ, - եթե պատահմամբ առկա է սննդի կամ ջրի պաշար, ապա այն օգտագործել խիստ խնայողաբար (մարդն առանց ջրի կարող է դիմանալ առավելագույնը 7 օր, իսկ առանց սննդի՝ 30 օր):

Սողանք

Լեռնային ապարների կամ հողաշերտի դանդաղ շարժը կոչվում է սողանք: Սողանքային շարժընթացներն ուղղակիորեն կախված են տեղանքի կառուցվածքից, ապարների շերտերի տեղաբաշխումից, ստորերկրյա ցնցումներից: Հիմնականում դրսևորվում է նախալեռնային և լեռնային շրջանների թեք լանջերում և գետահովիտներում: Սողանքներից տուժում են բնակելի և արդյունաբերական կառույցները, տրանսպորտային հաղորդաուղիները, էներգատարները, գյուղատնտեսությունը, հանքերը և այլն: Սողանքները մեծ վտանգ են ներկայացնում ջրամբարների համար: Սողանքին նպաստող գործոններից են. - երկրաշարժի և ուժեղ պայթյունների հարուցած ցնցումները, - անտառային զանգվածների ոչնչացումը, - ռոտզման համակարգերի չափից շատ օգտագործելը, - առատ մթնոլորտային տեղումները, 14 - լեռնային ապարների միջև գտնվող հողաշերտի կարբոնատային ծագումը, - սխալ շինարարական աշխատանքները և այլն: Սկսվող սողանքի նախանշան կարող են հանդիսանալ. - շենքերի պատերին, առաստաղին ճաքերի հայտնվելը, - ճանապարհների, առափնյա ամրությունների, փողոցների ճեղքվածքները, - լանջերի հիմքերի մոտ հողի ուռչելը, - դռների, պատուհանների դժվարությամբ փակվել-բացվելը, - ստորգետնյա ջրերի նոր ելքերի հայտնվելը, - ցանկապատերի, ծառերի տեղաշարժը և այլն: Հակասողանքային միջոցառում կարող է հանդիսանալ. - մակերեսային ջրերի հեռացումը, - անտառային գոտիների ստեղծումը, - հիդրոհամակարգերի վթարների արագ վերացումը, - սողանքազանգվածի հողը չորացնելու նպատակով խրամատներ փորելը, - անձրևաջրերի հավաքման և հեռացման համակարգ ստեղծելը, - ռոտզման

համակարգերի արդյունավետ օգտագործումը և այլն: Սողանքներն ըստ շարժման արագության լինում են. դանդաղ, միջին, արագ: Դանդաղ սողանքներն աղետալի չեն համարվում, քանզի նրանց արագությունը կազմում է տարեկան մի քանի տասնյակ սանտիմետր: Միջին արագության սողանքները մեկ օրում մի քանի կիլոմետր արագությամբ շարժվող սողանքներն են: Արագ սողանքները շարժվում են ժամում մի քանի կիլոմետր արագությամբ: Աղետի պատճառ մեծ մասամբ դառնում են արագ շարժվող սողանքները: Հանկարծակի սկսվող սողաքի դեպքում անհրաժեշտ է անմիջապես լքել տարածքը սողանքին ուղղահայաց ուղղությամբ, 15 իսկ նախանշանների առկայության դեպքում անմիջապես ահազանգել 911 ծառայություն: Հայաստանում սողանքային գոտիներ են արձանագրվել Ողջաբերդում, Նուբարաշենում, Դիլիջանում, Պտղնիում, Սիսիանում, Լոռիում, երկաթգծի Սանահին կայարանի սահմանամերձ գոտում և այլն: Հանրապետությունում հայտնի է մոտ 3000 սողանքավտանգ վայր: Հայաստանում ամենամեծ սողանք գրանցվել է 1840 թ. հուլիսին, երբ հայտնի Արարատյան երկրաշարժից, Արարատ լեռից պոկվել է մոտ 3 կմ³ ծավալով զանգված և անցնելով 28 կմ՝ իր ճանապարհին ոչնչացրել է Ս. Հակոբի վանքը, Արալիք քաղաքը, Երևանի սարդարի ամառային նստավայրը, մի քանի գյուղ՝ իրենց բնակիչներով, նաև պատնեշել է Սևջուր գետը:

Սելավ

Սելավը ջրի, հողի, լեռնային ապարների, տիղմի սրընթաց հոսք է, որն առաջանում է լեռնային գետերի ավազանում տևական անձրևների, ձյան կամ սառցապատ տարածքների ինտենսիվ հալոցքի, ջրամբարների պատվարի փլուզման հետևանքով (1): Բնութագրվում է ջրի մակարդակի կտրուկ բարձրացմամբ, գործելու կարճատևությամբ և ավերիչ ուժով. Արագությունը՝ միջև 10 մ/վրկ (36 կմ/ժ): ՀՀ-ում սելավները սովորաբար առաջանում են գարնանը և ամռան սկզբին: Ինտենսիվ սելավներ են դրսևորվել Ողջի, Մեղրի, Արփա, Գառնի, Գետառ, Մաստարա գետերի ավազաններում, Փամբակի, Սևանի լեռնաշղթաների ձորակներում, Երանոսի լեռնաշղթայում, Երասխ լեռան լանջերին և այլն: Հանրապետության տարածքի շուրջ

